Ազգ

AZG
armenian newspaper

Սեպտեմբեր 3
1992
Հինգշաբթի

օրաթերթ
Բ տարի, թիւ 80 (172)
գինը՝ 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ՝ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

Ադրբեջանը խաղաղության կողմնակի՞ց

Ինչպես հայտնում են ադրբեջանական աղբյուրները, այսօր Ղազախի եւ Իջեւանի սահմանին կհանդիպեն Ադրբեջանի եւ Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները՝ Ղազախստանի նախագահի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ադրբեջանական պատվիրակության կազմում ընդգրկված են նախագահի աղարաի, արտգործնախարարության եւ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ: Պատվիրակությունների հանդիպումը կկայանա Ալմա-Աթայի պայմանավորվածության համաձայն, կրակի դադարեցման հսկողության հարցերը քննարկելու նպատակով: Արտգործնախարարությունում հաստատել են, թե Ադրբեջանը շահագրգռված է առճակատման խաղաղ կարգավորման մեջ եւ ողջունում է այդ ուղղությամբ գործադրվող ցանկացած ջանքեր: Միայն այդ դեպքում հարց է առաջանում, թե ի՞նչ են անում Ստեփանակերտի երկնքում ռազմական ինքնաթիռները: ■

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկնում է ԱՄՆ

Սեպտեմբերի 19-ին Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը պաշտոնական այցով մեկնում է ԱՄՆ: Այցի գլխավոր նպատակներից մեկը Հայաստանի Հանրապետության նախագահի ելույթն է ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում, նոր նստաշրջանի բացման առթիվ: Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպումներ կունենա ԱՄՆ-ի պաշտոնական անձանց, մասնավորապես նախագահ Բուշի եւ պետքարտուղար Բեյքերի հետ: Նախատեսվում է նաեւ, որ Հայաստանի նախագահը կայցելի Դետրոյտ քաղաք, ինչպես երեկ բրիֆինգի ժամանակ հայտարարեց նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը:

Սակայն, երեկ երեկոյան հենց Դետրոյտից ստացած մեր տեղեկությունների համաձայն, վերջին պահին ջնջվել է հանրապետության նախագահի այցը այդ քաղաք, որտեղ Ռամկավար ազատական կուսակցությունը նախագահավայել ընդունելություն էր վերապահել Լ. Տեր-Պետրոսյանին:

Համաձայն մեր ստացած տեղեկությունների, հանրապետության նախագահի այցելության նախնական չվացուցակում կային նաեւ Լոս Անջելես եւ Բոստոն քաղաքները, որոնք նույնպես ջնջվել են:

Լ. Տեր-Պետրոսյանը Նյու Յորքում միջոցեպական հանդիպումներին զուգահեռ տեսակցություններ կունենա նաեւ ամերիկահայության ներկայացուցիչների հետ, որոնց թվում առանձին հանդիպում՝ ՀԲԸ Միության պատվո նախագահ եւ ազգային բարերար Ալեք Մանուկյանի հետ: ■

Գորիսը հրետակոծվում է զենքի բոլոր տեսակներից

Օգոստոսի լույս 2-ի գիշերը եւ երեկ օրվա ընթացքում Ադրբեջանի տարածքից զենքի բոլոր տեսակներից հրետակոծվել եւ գնդակոծվել են շրջանի սահմանամերձ Տեղ, Կոռնիձոր, Խնձորեսկ եւ Արտաշեն գյուղերը, ինչպես նաեւ Գորիս շրջկենտրոնը: Զոհեր չկան: Նշված գյուղերում կան զգալի ավերածություններ: Երեկ օրվա առաջին կեսին ադրբեջանական ուժերը կրակ են բացել շրջանի սահմանամերձ Շուռնուխ գյուղի, ինչպես նաեւ Գորիս-Կապան ճանապարհի հայկական պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Գնդակոծությունները դադարել են երեկ ժամը 4-ին:

Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, թե Հայաստանի Կապանի շրջանի տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի Զանգելանի շրջանի Յուխարի Էմեզլի, Ղազանչի, Սեիդլար եւ Քոլլա, ինչպես նաեւ Ղուբաթլիի շրջանի Նովլու գյուղերը, կան ծանր վիրավորներ: Նույն աղբյուրները հայտնում են նաեւ, թե իբր Սիսիանի շրջանի տարածքից գնդակոծվել է Նախիջեւանի Շահբուզի շրջանի Բաբաբաք գյուղը: ■

Չինադադար. Ադրբեջանական կողմի սադրանքները չեն դադարում

Սեպտեմբերի լույս 2-ի գիշերն ադրբեջանական ուժերը փորձ արեցին զինատեսակներից գնդակոծել են Կրասնոսելսկի հայկական սահմանապահ ուժերի դիրքերը: Հայկական կողմից մեկ մարդ վիրավորվել է: Երեկվա ընթացքում շրջանում իրավիճակը համեմատաբար հանգիստ է եղել:

Մինչդեռ, ինչպես հայտնում են Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից, սեպտեմբերի 1-ի երեկոյան եւ լույս 2-ի գիշերը հայկական ուժերն իբր զրահատեխնիկայի եւ ռազմական ուղղաթիռների աջակցությամբ հարձակվել են Ադրբեջանի Գեսարեկի շրջանի վրա եւ գրավել մարտավարական նշանակություն ունեցող մի քանի բարձունքներ, որտեղից գնդակոծում են Մարտոր, Մուրադարա, Գեյալի եւ Նովոիվանովկա գյուղերը: Դրա հետեւանքով, չորս մարդ զոհվել են, ավելի քան տասը՝ վիրավորվել:

Այնինչ իրականությունն այն է, որ Հայաստանի Կրասնոսելսկի եւ Միսիանի շրջանների սահմանների երկայնքով նկատվում են հակառակորդի զինված կազմավորումների խոշոր կուտակումներ:

Ինչպես հաղորդում է «Նոյյան տաղան» գործակալությունը, ադրբեջանական կողմը զինադադարը խախտել է նաեւ Կապանի եւ Մեղրու շրջանների ուղղությամբ, որտեղ երեկ եւ նախորդ գիշեր անընդհատ ավտոմատային կրակոցներ են հնչել: Նույնպիսի կրակոցներ են հնչել նաեւ Վարդենիսի շրջանի Սոդք ավանի ուղղությամբ: ■

Հարձակում Հադրութի շրջանի վրա

Սեպտեմբերի լույս 2-ի գիշերը Ֆիզուլիի շրջանից ադրբեջանական բանակի խոշոր կազմավորումը զրահատեխնիկայի եւ տանկերի աջակցությամբ հարձակվել է Հադրութի շրջանի Էդիլլու գյուղի վրա: Սեպտեմբերի 2-ի առավոտյան հարձակումը կասեցվել է: Նույն գիշեր հրետանուց եւ տանկերից հրետակոծվել է Հադրութի շրջանի Ջրակուս գյուղը: Վիրավորվել են չորս բնակիչ, կան ավերածություններ:

Սեպտեմբերի լույս 2-ի գիշերը Աղդամի կողմից «Գրադ» կայանքներից հրթիռակոծվել է Ասկերանի շրջանի Մեհթիշեն հայկական գյուղը:

Շուշիի մոտակայքում հայտնաբերվել են օգոստոսի 31-ին խփված ադրբեջանական ՄԻԳ-25 օդանավի բեկորները: Օդաչուն, ըստ երեւույթին զոհվել է պայթյունի պահին:

Շահումյանի շրջանում ընդլայնվում է պարտիզանական շարժումը: Միայն երկու օրերի ընթացքում սպանվել է առնվազն 13 ադրբեջանցի զինվոր: ■

Ադրբեջանական գրոհային ինքնաթիռները ռմբակոծել են հայկական դիրքերը

Ադրբեջանական բանակը չի դադարեցնում մարտական գործողությունները ԼՂՀ-ում: Ինչպես սեպտեմբերի 2-ին «Սնարք»-ի թղթակցին հաղորդեց ԼՂՀ Գերագույն խորհրդի մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանը, սեպտեմբերի 1-ին եւ 2-ին գրոհային ինքնաթիռները հարձակումներ են ձեռնարկել ինքնապաշտպանական հայկական ուժերի դիրքերի վրա՝ ցած նետելով մի քանի ավիառումբ: Հետեւանքների մասին տվյալները ճշտվում են:

Կապանի մարտերից հետո ադրբեջանական զինված կազմավորումները, կրելով մեծ կորուստներ, գրավել են եւս երկու հայկական գյուղ Մարտակերտի շրջանում՝ Պոդոսագոմերը եւ Կճողոտը: Ինչպես հայտնեց «Նոյյան տաղան» գործակալությանը, վկայակոչելով Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը, մարտի ընթացքում խփել են երկու ադրբեջանական տանկ եւ մեկ հետեւակի մարտական մեքենա: Սպանվել են առնվազն 20 ադրբեջանցի: Հայկական կողմից զոհվել են երկու եւ վիրավորվել 10 ազատամարտիկ:

Այսպես, Մարտակերտում ճակատագրական այժմ անցնում է Չլդրան գյուղով: ■

Գեորգի Պետրոսյանը Երեւանում

Երեւան է ժամանել Լեռնային Ղարաբաղի ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը: Ինչպես երեկ հայտնեց ԼՂՀ ԳԽ մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարելիցին նվիրված այս այցելության նպատակը Հայաստանի ղեկավարության հետ խորհրդակցությունն է եւ Երեւանում գտնվող արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների հետ կապեր հաստատելը: *«Մենք հույս ունենք*, ասաց Գեղամ Բաղդասարյանը, *որ այդ հանդիպումները կընդլայնեն միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ի ճանաչմանը»*: ■

Մոսկվայում կքննարկվի Հայաստանի շրջափակման հարցը

Ռուսաստանի, Վրաստանի եւ Աբխազիայի եռակողմ հանդիպման ժամանակ կքննարկվի նաեւ երկաթուղու անխափան աշխատանքի եւ ռուսական ցորենը Հայաստան հասցնելու հարցը: Այդ մասին հայտնեցին Հայաստանի նախագահի մամուլի ծառայությունում: Երեկ երեկոյան Տեր-Պետրոսյանը զրուցել է Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի, ինչպես նաեւ Ուկրաինայի եւ Ղազախստանի ղեկավարներ Լեոնիդ Կրավչուկի եւ Նուրսուլթան Նազարբաեւի հետ: ■

Աբխազիա. Մարտեր Գագրայում եւ Սուխումի մոտակայքում

Ինչպես հայտնում է Աբխազիայի Գերագույն խորհրդի լրատվական կենտրոնը Գուդաուտայից, սեպտեմբերի 2-ի գիշերը շարունակվել են մարտերը Ներքին Էշերա գյուղում, որտեղ վրացական ուժերը փորձում են գրավել ալրաղացը եւ նավթաբազան: Կորուստները կազմում են 9 սպանված եւ 15 վիրավոր: Գուդաուտայի հիվանդանոցն առավոտյան հաստատեցին 4 վիրավոր խաղաղ բնակիչների, ինչպես նաեւ աբխազների կողմից կոված Տամբովցի Վիկտոր Գրյազնովին, որը մարտի ժամանակ խփել էր վրացական 1 տանկ:

Գուդաուտայի մամուլի կենտրոնը հայտնում է նաեւ, որ երեքշաբթի օրը ծովի վրայով մեծ քանակությամբ զենք է հասցվել Գագրայում գտնվող վրացական զորքերին, այդ թվում ծանր տեխնիկա, տանկեր:

Մամուլի կենտրոնի պնդմամբ՝ լաստանավերի տեղաշարժման անվտանգությունը ապահովում էին ԱՊՀ ռազմածովային ուժերի նավերը: ■

Չինաստանի տնտեսական աճը՝ 20 տոկոս

Ըստ Չինաստանի վարչապետի, վերջին տարվա ընթացքում իր երկրի տնտեսական ընդհանուր աճը կազմել է 20 տոկոս, ինչ որ, ըստ իրեն, արդյունքն է իշխանությունների վարած ազատական (լիբերալ) քաղաքականության:

Վարչապետը հայտնեց, թե քաջալերված ձեռք բերված արդյունքներից, կառավարությունը պատրաստվում է առավել եւս ազատականացնել տնտեսությունը, սկսելով գների վերահսկողությունից, որից առաջին հերթին զերծ են կացուցվելու 500 արտադրատեսակներ:

Մյուս կողմից, չինական իշխանությունները երեքշաբթի օրը ձերբակալեցին Մ. Նահանգներից Պեկին վերադարձող ուսանող Շեն Տոնգին, որ 1989 թ. ուսանողական պոռթկումների լիդերներից էր: 24 տարեկան ուսանողը ԱՄՆ-ում հիմնադիր է «Ռամկավարություն Չինաստանում» հիմնադրամի: Ամերիկյան դեսպանությունը երեկ պահանջեց նրա ազատարձակումը: ■

ՄԱԿ-ը սերբ հրամանատարների հետ համաձայնություն կայացրեց

Սարաեւոյում, որտեղ նախորդ օրերին դարձյալ ծանր ռմբակոծություններ էին տեղի ունենում, որոնց հետեւանքով նախորդ օրը վիրավորվել էին խաղաղապահ զինվորներ, երեկ համաձայնություն կայացավ ՄԱԿ-ի եւ սերբ ուժերի հրամանատարությունների միջեւ՝ ծանր զենքերի վերահսկման շուրջ: Ըստ այդ պայմանավորվածության, սերբերն իրենց ծանր հրետանին, հրասայլերն ու հրանոթները կենտրոնացնելու են քաղաքի շրջակայքի 11 կետերում, որտեղ դրանց վերահսկելու են ՄԱԿ-ի դիտորդները: Սերբ հրամանատարները խոստացել են, որ միայն պատասխան կրակ կբացեն քաղաքի իսլամական կրակակետի վրա: Այսուհանդերձ, ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի հրամանատարությունն այնքան լավատեսորեն չէ տրամադրված: Նրանցից մեկի համաձայն, իրենց պարտականությունը պարզապես լինելու է արձակված ռումբերի քանակն ու ժամանակը հաշվապահելը... Այս կողմից, նախորդ օրը ուշ գիշերին անակնկալորեն վերաբացվեց Բոսնիայի Գորաժդե քաղաքի ռմբակոծությունը: Նույն օրն այնտեղ համաձայնություն էր գոյացել, ինչպես հաղորդել էին մեր երեկվա համարում, վերացնելու քաղաքի երեքուկես ամսյա պաշարումը: Սակայն, սերբական ուժերի մի մասի հեռացումից հետո իսլամները վրեժխնդրական հարձակում էին գործել քաղաքի սերբական հատվածի վրա, որի հետեւանքով սերբ բանակայինները վերադարձել էին իրենց դիրքերը: ■

Արաբա-իսրայելական բանակցություններում ընդմիջում

Այն բանից հետո, երբ պաղեստինցիները, դժգոհ մնալով սահմանափակ ինքնավարություն ընդունելու մասին իսրայելյան առաջարկից, իրենց հերթին ներկայացրին հակառաջարկներ, Թել-Ավիվի ներկայացուցիչների խնդրանքով երեկ ընդմիջում հայտարարվեց Վաշինգտոնում կայացող արաբա-իսրայելյան բանակցություններում: Իսրայելյան պատվիրակությունը խնդրեց առիթ տալ պաղեստինյան առաջարկների շուրջ խորհրդակցություններ ունենալու Թել-Ավիվի հետ: Այս կողմից, Վաշինգտոնում Իսրայելի դեսպանը երեկ իր անբավարարվածությունը հայտնեց հատկապես սիրիական եւ հորդանյան դիրքորոշումների նկատմամբ: Պարզվեց, որ Սիրիան պահանջում է ամբողջովին հետ սանալ 1967 թ. ի վեր իր կորցրած տարածքները: Բանակցությունները կշարունակվեն սեպտեմբերի 14-ին: ■

Ռաֆսանջանին պահանջում է վետոյի իրավունքից զրկել մեծ հնգյակին

Ջակարտայում, որտեղ տեղի է ունենում չմիավորված 90 երկրների համաժողովը, Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին իր ելույթի ընթացքում պահանջեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում 5 մեծերին զրկել վետոյի իրավունքից, որը իր կարծիքով մեծագույն խոչընդոտությունն է ՄԱԿ-ի անդամ մյուս երկրների նկատմամբ: Նույնհետայն ելույթ ունենալով համաժողովում, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին պատասխանեց, թե փոխանակ փոփոխություններ պահանջելու ՄԱԿ-ի կանոնագրում, երբոր աշխարհի երկրները պետք է ավելի ակտիվ հանդես գան շրջանային եւ միջազգային հրատապ հարցերում: ■

digitised by A.R.A.R.@

Սթափվեք, հայրենիք ենք կորցնում

Ղարաբաղյան պատերազմն այդպես էլ հայ ժողովրդի պատերազմը չդարձավ: Ու լեռնային գյուղերի վերջին մի բուռ պաշտպանների ինքնամոռաց ու հուսահատ կռվի շեփորվող հերոսականության ծխածածկույթի տակ թշնամին գրավում է Ղարաբաղը՝ գյուղ առ գյուղ, հանդ առ հանդ, կածան առ կածան... Ու լեռնային գյուղերի վերջին մի բուռ պաշտպանների՝ օգնության աղաղակները թաղվում են Հայաստան կոչված Սոդոմ-Գոմորի ամենօրյա ու ամենախեղդ հոգսերի ահագնացող շերտի տակ:

Ես Հայաստանի իշխանություններին չեմ մեղադրում: Իրենց մեղքը իրենց վզին: Ոչ էլ ուզում եմ սպառնալ, թե դարերի անեծքը կկախվի նրանց գլխին: Ոչ: Եթե այսպես շարունակվի, անիծողներ չեն լինելու: Պարզապես Ղարաբաղը սխալվել է՝ կարծելով, թե թիկունքում իր շահերը մինչեւ վերջ պաշտպանելու պատրաստ պետություն կա: Թիկունքում ընդամենը մայր Հայաստանն է՝ այս տղամարդ աշխարհում էգ մի երկիր: Մինչդեռ Ղարաբաղին ոչ թե լացակումած մայր էր պետք, այլ ավագ եղբայր, որը եթե ոչ միասին մեռնելու, առա գոնե միասին ծեծվելու տղամարդկությունը կունենար:

Ակամա մտածում ես, թե Հայաստանի իշխանությունների հոգսը լոկ այս (առայժմ) 29 հազար քառակուսի կիլոմետրանոց շուկան է, թե մենք «միջազգային կարծիքի» ու «պետական մտածողության» պղպջակին բազմած, ինչու չէ՞, կարող ենք նաեւ մի քանի կաթիլ արցունք ավել թափել Ղարաբաղի հիմնահատակ ավերված գյուղերի մոխրակույտերի վրա, եթե ոչ ինքներս մեզ խաբելու, առա գոնե «բարիդրացի» հարեւաններից մի քանի տակառ մազութ ավել ստանալու համար:

Իսկ ժողովուրդը լռում է: Ո՞րն է պատճառը: Ցանկացած ժողովուրդ ժողովուրդ է միայն այն դեպքում, եթե ունի միասնական, համընդհանուր շահ: Ունի՞ հայ ժողովուրդն այդպիսի շահ: Այսօրվա ջայլամային կեցվածքը վկայում է, որ եթե այդպիսի շահ նույնիսկ գոյություն ունի, առա դա միայն ու միայն օրվա հացն է ու ձմեռվա ջերմությունը (շահի միասնականությունը պայմանավորված է նրանով, որ բոլորի համար էլ մազութն ու ցորենը նույն ճանապարհով են գալիս): Հայ դատն ու պահանջատիրությունն էլ մի կողմ թողնենք, որովհետեւ եթե այսօր պահանջատիրության լացակոծված աշխարհագրությունը մեր աչքերի առաջ ընդարձակվում է, եւ ժողովրդի հիմնական մասը թված ունի դրա վրա, ի՞նչ համընդհանուր շահի մասին կարող է խոսք լինել: Ժողովրդի ամենակուլ արծաթասիրությունն այսօր խժռում է ամեն ինչ՝ հայրենիք, բարոյականություն, արժանապատվություն... Պղնձով ու նիկելով բեռնավորված քարավանները շարունակում են գնալ Թուրքիա, ու այնտեղից «հաջող» առեւտրով վերադարձած հասարակ առեւտրականները ազգուտակի նախանձոտ հայացքների տակ անթարթույց հոգարությամբ ցուցադրում են թուրքական կանացի սրիտակեղենը, որը վաղը այդ նույն պղնձից ու նիկելից ձուլված փամփուշտների տարափի տակ պարզելու են որպես հաշտություն աղերսողի արցունքաթաց դրոշ:

Ո՞վ է ասել, թե ժողովուրդը երբեք չի սխալվում: Ժողովուրդը սխալվում է, եւ այն էլ՝ բավական հաճախ: Ինչի՞ ծնունդն է այսօրվա ծակուծուկ Հայաստանը, եթե ոչ ժողովրդի սխալի:

Ժողովրդի մի փոքր մասը միայն, որ արդեն ժողովուրդ էլ չէ, այլ մի բուռ մարդիկ, պիտի կոկորդները պատռելով աղաղակեն, թե սթափվեք, հայրենիք ենք կորցնում: Եւ այդ աղաղակները պիտի թաղվեն Հայաստան կոչված Սոդոմ-Գոմորի ամենօրյա ու ամենախեղդ հոգսերի ահագնացող շերտի տակ, որովհետեւ Ղարաբաղի պատերազմն այդպես էլ չդարձավ հայ ժողովրդի պատերազմը...

ԱՐՄԵՆ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ



Իսկապե՞ս քարը մեր հարստությունն է

Տարիներ շարունակ մենք հպարտացել ենք, որ քարը մեր հարստությունն է: Չգիտեմ էլ՝ հպարտացե՞լ ենք, թե բողոքել, որ Հայաստանում ինչն է շատ՝ քարը, եւ որ մենք հայերս քարից հաց քամող ժողովուրդ ենք: Ինչ անուններ ասես չենք հորինել՝ քարասան, քարեղեն երկիր...

Քարն իսկապես հարստություն է: Բայց ո՞ւմ հարստությունը: Իհարկե, պետության, կգոչի բանից անտեղյակ ընթերցողն ու որպես ապացույց դրոշի պես կճոճի ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը: Իհարկե, ժողովրդի, կդնդնեն «բլեսությունը ժողովուրդն է» կարգախոսին միամտաբար հավատացողները:

Լավ, իսկ ի՞նչ արժե քարը: Այն նույն քարը, որը «ժողովրդի հարստությունն է», բայց որը ձեռք բերելու համար ժողովուրդը հսկայական գումարներ է ծախսում: Կանոնավոր կտրվածքի տուֆքարի խորանարդ մետրի պետական գինը տատանվում է 300–450 ռ. սահմաններում: Այսինքն, մեկ քառ արժե 6–10 ռ: Իրականում եթե փորձես ձեռք բերել այդ գնով, ճիշտ պարզապես կանոնավոր կտրվածքի հետ ոչ մի կապ չունեցող աղյուսներ կտան: Ուզում ես նորմալ քար գնել՝ վճարիր: «Մասնավոր» գինը «պայմանագրային» է եւ «իհարկե» պետականից ավելի բարձր: Նույնը՝ մարմարի, տուֆի, ֆելզիտի սալիկներ կամ բլոկներ գնելիս: Մի խոսքով՝ «քարի գործը» Հայաստանում ամենաշահավետներից է:

Բայց սա հարցի մի կողմն է միայն: Տարիներ առաջ, երբ խոսք էր գնում Հայաստանի անկախության մասին, մեր հույսը պղնձից ու մոլիբդենից բացի նաեւ շինանյութերի վրա էր: Հայաստանում են գտնվում ԽՍՀՄ բարձրակարգ տուֆի պաշարների մեծ մասը, մարմարի, պեռլիտի բազմաթիվ հանքեր... Ի՞նչ եղան դրանք: Փորձո՞ւմ են բնթեւացնել հանրապետության տնտեսական ծանր վիճակը:

Վերջերս Հայաստանի Գերագույն խորհրդի բնության պահպանության եւ բնական պաշարների հանձնաժողովում քննարկվեց «Հայարդշինանյութեր» պետական արտադրական միավորման ձեռնարկությունների կողմից ընդերքի պաշարների օգտագործման հարցը: Ինչպիսի՞ն են քննարկման արդյունքները: Այս հարցին խնդրեցինք պատասխանել «Հայարդշինանյութեր»ի էկոնոմիկայի բաժնի պետ, ՀՀ Գերագույն խորհրդի հասարակական փորձագետ **Լենդրուշ Խաչատրյանին:**

– Նախ ասեմ, որ հանձնաժողովում այդ հարցի քննարկումը պայմանավորված էր նրանով, որ դեռեւս երկու տարի առաջ հանրապետության կառավարությանն իրազեկ էր պահվել բնական հարստությունների ոչ ռացիոնալ արդյունահանման մասին: Սակայն անցած ժամանակահատվածում նշված բնագավառում ստեղծվեց ադեսային վիճակ, եւ այս անգամ հանձնաժողովն արձանագրեց միավորման ձեռնարկությունների կողմից ընդերքի պաշարների բարբարոսաբար օգտագործման եւ լեռնային աշխատանքների բացահայտ կողմից խախտումների բազմաթիվ փաստեր: Հատկապես որոնանյութերի եւ երեսապատման քարի հանքերում տեխնոլոգիայի եւ պարամետրերի պարբերաբար խախտման պատճառով զգալիորեն նվազել է լեռնային զանգվածից բլոկների եւ հատ քարի ելքը: Փաստորեն շինարարական քարի արդյունահանման ընթացքում նրա գերակշռող մասը վերածվում է անօգտագործելի թափոնների, որոնք կուտակվում են հանքերի եզրերին, հանքադաշտերի ոչ լրիվ մշակված տարածքներում, ինչպես նաեւ օգտակար հանածոների հաշվարկված պաշարների սահմաններում: Հանքերի կոնսերվացումը կատարվում է կամայականորեն, առանց պահանջվող փաստաթղթերի ձեւակերպման եւ օգտակար հանածոների համապատասխան հանակի դուրս գրման:

Նման պայմաններում հանքավայրերի հետագա շահագործումը միանգամայն անհնար է: Մասնագետների կարծիքի համաձայն, լեռնային գործի կանոններից ելնելով, միավորման համակարգում գործող բոլոր 150 հանքերում լեռնային աշխատանքները ենթակա են դադարեցման:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում շինանյութերի արդյունաբերության բնագավառը ղեկավարել են լեռնահանույթային աշխատանքների հետ առնչություն չունեցող մարդիկ, ասում է պրն. Խաչատրյանը, որոնք էլ յուրովի են լուծել ճյուղի կադրային հարցերի խնդիրները: Հետեւանքը եղել է այն, որ այսօրվա վիճակով ձեռնարկությունների եւ հանքերի ղեկավար կազմի շուրջ 90 տոկոսը չունեն համապատասխան մասնագիտական կրթություն: Նրանց մեջ կարելի է հանդիպել մանկավարժների, պատմաբանների, բանասերների, երկրագործների, տեխնիկագործների եւ այլն: Դա գալիս է նրանից, որ տարիներ շարունակ շինանյութերի արդյունաբերության համակարգը համարվել է օժանդակ ճյուղ, եւ, որ ամենակարեւորն է, առանձին մաֆիոզ խմբերի համար ընդերքի պաշարները հարստացման անսպառ աղբյուր են եղել, իր խոսքն ավարտում է պրն. Խաչատրյանը:

Վերջապես կարելի է ասել, որ ընդերքի պաշարների բարբարոսաբար օգտագործումը տեղի ունի միայն հանրապետությունում անիշխանության եւ անպատժելիության մթնոլորտում: Իրավիճակը շտկելու ուղին մեկն է՝ ամբողջապես կիրառկել Հայաստանի ընդերքի մասին օրենքն իր բոլոր օրենսդրական ակտերով ու մեխանիզմներով:

Ընդհանրապես, այս բնագավառի մասին զարմանալիորեն քիչ է խոսվում ու գրվում: «Քարի խնդիրը» մարդկանց հուզում է այն ժամանակ, երբ շինարարություն են սկսել, եւ առատելական գումարներ վճարելիս իրենք իրենց մխիթարում են «պար մտնողը պիտի շորորա» հանրահայտ խոսքով, կամ երբ դժբախտություն է պատահել, իսկ գերեզմանատարի հարցում սովորաբար «սակարկելը տեղին չէ»...

Վերջին հաշվով, քարն իսկապես մեր հարստությունն է, բայց ցավալին այն է, որ այդ հարստությունից «ոչ աչքերս է բան տեսնում, ոչ բերաններս բան ընկնում»:

ԱՐԱ ՍԱՐՅԱՆ

Ընդհանուր առմամբ զինադադարը պահպանվում է

Ադրբեջանցիները Ղարաբաղը չեն մտցնում զինադադարի պայմանների մեջ

Երեկ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանի բրիֆինգը, որի ընթացքում լրագրողներին տեղեկություններ տվեցին ինչպես Աբխազիայի իրադրության, այնպես էլ 60-օրյա զինադադարի ղազախստանյան համաձայնագրի իրականացման ընթացքի մասին:

Անդրադառնալով աբխազական իրադարձություններին, պրն. Շուգարյանը նշեց, որ թեեւ հայ ազգաբնակչության նկատմամբ բռնությունների եւ թալանի դեպքեր արձանագրվել են, այնուամենայնիվ դրանք ազգային խտրականության կնիք չեն կրում: Արդեն մի քանի օր է, ինչ հակամարտության շրջանում է գտնվում Հայաստանի պատվիրակությունը՝ պատգամավոր Սեյրան Բաղդասարյանի գլխավորությամբ:

Ինչ վերաբերում է զինադադարին, առա, ինչպես հայտնեց նախագահի մամուլի քարտուղարը, այն իրականում սկսել է գործել միայն սեպտեմբերի 1-ին, ժամը 18-ին, եւ այն էլ՝ միայն հայ-ադրբեջանական սահմանում: Իսկ սեպտեմբերի 1-ին, օրվա առաջին կեսին Կրասնոսելսկի շրջանի ուղղությամբ ադրբեջանցիների ձեռնարկած ռազմական գործողությունները պարզապես ուժի ցուցադրման նպատակ ունեին:

Զինադադարի խնդրում ամենակարեւորն այն է, որ ադրբեջանական կողմը համառորեն փորձում է ներկայացնել այն որպես սոսկ հայ-ադրբեջանական Լեռնային Ղարաբաղը դուրս թողնելով սահմանագրված համաձայնագրի շրջանակներից: Մինչդեռ, Հայաստանի դիրքորոշումն այստեղ միանշանակ է. սեպտեմբերի 1-ի երեկոյան Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ կայացած հեռախոսազրույցի ժամանակ Հայաստանի նախագահն ասել է, թե քանի դեռ Ղարաբաղում պատերազմական գործողությունները շարունակվում են, հայ-ադրբեջանական սահմանի հանգստության մասին դժվար է խոսել:

Ղարաբաղում պատերազմական գործողությունների ընթացքի վերաբերյալ պրն. Շուգարյանը հայտնեց, թե անցած օրվա ընթացքում ադրբեջանցիներին հաջողվել է Մարտակերտի շրջանում գրավել եւս երկու հայկական գյուղ՝ Պողոսագոմերն ու Կճողոտը: Ի դեպ, Ադրբեջանի արտգործնախարարը հայտարարել է, թե ադրբեջանական բանակի՝ ռազմական ինքնաթիռներն Ադրբեջանին է տվել Ռուսաստանը:

Պրն. Շուգարյանն ասաց նաեւ, որ թեեւ հայկական կողմը 60-օրյա զինադադարից որոշակի սպասելիքներ ունի, այնուամենայնիվ անհրաժեշտ է ամեն կերպ ամրացնել Ղարաբաղի պաշտպանությունը:

Շահումյանի շրջանի տարածքում ծավալված մարտական գործողությունների մասին նախագահի մամուլի քարտուղարն այնքանն ասաց միայն, որ հայկական պարտիզանական ջոկատները գործում են մեծ հաջողությամբ:

Ա. Բ.

Բորիս Առուշանյան. ԼՂՀ-ն վաղ թե ուշ կճանաչվի

Ստեփանակերտ, սեպտեմբերի 2: Երեկ լրացավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մեկ տարին: ԼՂՀ հռչակագիրն ընդունվեց 1991 թ. սեպտեմբերի 2-ին, նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի նիստում: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին ասաց ԼՂՀ-ի Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Բորիս Առուշանյանը, այս ընթացքում Ղարաբաղում ստեղծվել են պետական կառավարման կառույցներ, ինքնուրույն տնտեսական մեխանիզմներ, ամրացվել է հանրապետության ինքնապաշտպանությունը: «Սակայն, մեր հիմնական խնդիրը, նշեց Առուշանյանը, ԼՂՀ ճանաչմանը, Ադրբեջանի հետ պատերազմի դադարեցմանը հասնելն է, երկարաժամկետ խաղաղության հաստատումը, տնտեսական ճգնաժամից դուրս գալը: Ես լավատես եմ եւ համոզված եմ, որ իմ երկիրը վաղ թե ուշ կճանաչվի: Ազատության եւ անկախության իրավունքն էլ այսօր զենքով ձեռք է բերում Ղարաբաղի ժողովուրդը», ավելացրեց ԼՂՀ վարչապետի տեղակալը: ■

Անհրաժեշտ են անկախ դիտորդներ

Ինչպես սեպտեմբերի 1-ին «ԻՖ»-ին հայտարարեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղարի տեղակալ Արման Աբրահամյանը, Ղարաբաղյան կոնֆլիկտը կարգավորելու Ղազախստանի նախաձեռնությունն անհրաժեշտ է դիտել ԵԱՀԽ-ի, ՍԱԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների միջնորդական ջանքերի սահմաններում: Նա նշեց նաեւ, որ «այժմ սկզբունքորեն հնարավոր է շարունակել երկխոսությունը Երեւանի, Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ»: Ա. Աբրահամյանի խոսքերով, ԵԱՀԽ-ի հետ համագործակցության արդյունքում պետք է ստեղծվի «անկախ դիտորդների համակարգ, որը կարող է հստակ որոշել, թե ով է զինադադարի խախտման մեղավորը»: Բացի Ղազախստանից, դիտորդներ ուղարկելու պատրաստակամություն է հայտնել նաեւ Ռուսաստանը, սակայն այդ հարցը դեռ բազմակողմանիորեն չի քննարկվել, նշեց նա: ■

Զինադադարը կապված է ղարաբաղյան հիմնահարցի հետ

Սխալ կլիներ քննարկել զինադադարի մասին հարցը Ղարաբաղյան խնդրից դուրս, քանի որ հենց Ղարաբաղյան հակամարտությունն է կոնֆլիկտի առանցքը, հայտարարեց «ԻՖ»-ին տված հարցազրույցում Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը: Նրա խոսքերով, իրական հաղադարը հնարավոր է, «եթե Ադրբեջանը փորձի երկխոսություն հաստատել եթե ոչ ԼՂՀ ղեկավարության, առա գոնե Ղարաբաղի զինվորական հրամանատարության հետ, քանի որ իրականում Ադրբեջանին դիմակայում է Ստեփանակերտից ղեկավարվող ռազմական ուժը»: ■

Թուրքիան Ադրբեջանի ավագ եղբայրն է

Ադրբեջանը 275 միլիոն ռուբլու նավթ, երկաթուղի, պղինձ է արտահանել Թուրքիա եւ Իրան: Գրեթե բոլոր գործողությունները իրականացվել են թուրքական բանկերի միջոցով: «Ռուսաստանի փոխարեն Թուրքիան է դառնում Ադրբեջանի ավագ եղբայրը», նշել է հանրապետության մամուլի նախագահի առաջին տեղակալ Ջումշուդ Նուրիեւը: ■

Վրաստանի ադրբեջանցիները բոյկոտում են զինակոչը

Բաքվի մամուլը հաղորդում է, որ Արեւելյան Վրաստանի չորս շրջաններում բնակվող ադրբեջանցիները բոյկոտում են զորակոչը ազգային բանակ: Պատճառը՝ նրանք չեն ցանկանում մասնակցել աբխազական կոնֆլիկտին: ■

digitised by A.R.A.R.@

Բոսնիա Կովկասո՞ւմ

The New York Times

ՌՈՆԱԼԴ ԳՐԻԳՈՐ ՍՅՈՒՆԻ

Ռոնալդ Գրիգոր Սյունին հայտնի կովկասագետ-վրացագետ է Մ. Նահանգներում: Հեղինակավոր թերթերն ու ամսագրերը, ինչպես այս պարագայում, հաճախ են դիմում Միչիգանի համալսարանի հայագգի պրոֆեսորին, երբ հարցը վերաբերում է Կովկասին: Առանց լրիվ բաժանելու նրա տեսակետները, բարգմանաբար տպագրում ենք «Նյու Յորք թայմս» թերթի 1992 թ. սեպտեմբերի 1-ի համարում հրապարակված նրա հոդվածը:

Խ. Միության փլուզումից հետո ազգայնականության պոռթկումն ազգային որոշ խմբավորումների առիթ տվեց անկախությունը որպես առաջին քայլ օգտագործել միասարք պետություններ ստեղծելու նպատակով: Իրականացնելու համար այն, նրանք արտաքսում կամ սարսափի են մատնում ազգային փոքրամասնություններին:

Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա տարածվող ազգայնական այս քաղաքականության նկատմամբ Արևմուտքի ցուցաբերած անհասկացողությունը, այդ կոնֆլիկտներն իբրև «միջեթնիկական կռիվներ» կամ «նախնադարյան կրոնական հակադրություններ» ընդունելու նրա պնդաճակատությունը, ինչպես նաև ակամա անլուծելի թվացող պայքարների մեջ ներգրավվելու մտավախությունը պատճառ են դարձել վտանգավոր անգործության: Այս ամենը նպաստում են, որ կոնֆլիկտները վերածեն առավել ընդարձակ պատերազմների, ինչպես Հարավսլավիայում և հետզհետե՝ Կովկասում:

Հայաստանի և Ադրբեջանի անկախ հանրապետությունները քաղաքակրթական պատերազմ են մղում իրար դեմ և ինքնավար երկու շրջանների՝ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի համար: Իսկ դեպի հյուսիս՝ աբխազների և օսերների վրա Վրաստանի գործադրված ճնշումն ավելի է աղակայունացնում շրջանը:

Անդրկովկասի սահմանների մոտ Թուրքիան անձկությամբ է հետևում թուրքերի ավանդական թշնամիների՝ հայերի դեմ թուրքացող ադրբեջանցիների քայլերին, մինչ Իրանը փորձում է միջնորդել վախենալով, որ իր սահմանների ներսում ապրող ադրբեջանցիները կարող են բորբոքվել հյուսիսում տիրող խառնաշփոթությունից:

Գարնանը հայերը Լեռնային Ղարաբաղում հաջողությամբ վռնդեցին ադրբեջանցիներին և միջանցք հասատեցին Հայաստանի հետ: Ամռանը ադրբեջանցիները հակագրոհ ձեռնարկեցին՝ հարձակվելով, ոմբակոծելով ու գրավելով Հայաստանից բնակավայրեր: Իրանի և ԵԱՀԽ-ի ձեռնարկված միջնորդական փորձերը ձախողության մատնվեցին, և հայերը միջամտելու կոչ արեցին ՄԱԿ-ին:

Հակառակ որ Լեռնային Ղարաբաղը փոքրիկ, առանձնացված շրջան է, Մ. Նահանգներն ու ՄԱԿ-ը շահագրգիռ պետք է լինեն վնասազերծելու և ի վերջո լուծելու կոնֆլիկտը: Ավելի ծավալուն պատերազմի իրական սպառնալիքի կողքին, որի մեջ կներքաշվեն Ամերիկայի մի դաշնակից (Թուրքիան) և մի հակառակորդ (Իրանը), պատերազմը կականահարի ռամկավարությունը Կովկասում: Վրաստանի փորձը ցույց է տալիս, թե ինչպիսի հեշտությամբ ազգամիջյան կոնֆլիկտները կարող են կոռուցիայի ենթարկել ազգային ղեկավարներին, իշխանության գլուխ բերել կիսազինվորական հավակնոտների և խճճել աշխատանքը այնպիսի միջնորդների, ինչպիսին է Էդուարդ Շեւարդնաձեն: Թեև Հայաստանն ու Ադրբեջանը ընտրյալ կառավարություններ ունեն, երկուսն էլ, սակայն, սպառնալիքի տակ են այնպիսի քաղաքացիների, որոնք պատրաստ են ու սպասում են պարտադրելու մենիշխանական լուծումներ:

Ի հավելումն այս բոլորի, եթե երկու հանրապետություններից որևէ մեկին հաջողվի միանձնյա տիրապետել Լեռնային Ղարաբաղին, պայքարը նրանց միջև կդառնա տևական: Միայն ՄԱԿ-ի և մեծ ուժերի միջնորդած և նախաձեռնած լուծումը կարող է խաղաղություն բերել Անդրկովկասին:

Քառամյա կռիվներից հետո հասկ է դառնում, որ ոչ հայերի սկզբնական ցանկությունը՝ Ղարաբաղը միացնել իրենց հանրապետությանը, և ոչ էլ Ադրբեջանի կազմում հայկական ինքնավարություն ստեղծելու Գորբաչովի ծրագիրը կենսունակ չեն: Միակ տեսանելի կարգադրությունը կարող է լինել շրջանի բաժանումը էթնիկական սահմանագծերի միջև, հանրապետությունների միջև նոր սահմանների ստեղծումով և (ավելի ռեռոպիստական առաջարկություն) բոլորովին անկախ մի Լեռնային Ղարաբաղի ստեղծումով:

Առանց քաղաքական միջամտության մահացու փոքրիկ պատերազմը վերածելու է Բոսնիայի մակարդակով կոնֆլիկտի՝ փորձելով տեղահանել հայերին և կոտրել նրանց պարտիզանական դիմադրությունը: ՄԱԿ-ը, ամերիկյան հզոր նեցուկով, կարող է բոլոր կողմերին բերել բանակցությունների սեղանի շուրջ, ճնշում բանեցնել զինադադարին համակերպվելու և խաղաղապահ ուժեր ուղարկել՝ սահմանային ճշգրտումները վերահսկելու համար: Քաղաքական արագ միջամտությունը զինվորական միջամտության առաջն առնելու միակ հույսն է մնում, երբ Թուրքիան, Իրանը և շրջանի այլ երկրներ կարող են մխրճվել կոնֆլիկտի մեջ:

■

Մոր եւ մանկան հարցերին առաջնություն

Դուք պատրաստվո՞ւմ եք երեխա ունենալ: Դրա համար ձեզնից կպահանջվեն ամուր նյարդեր, դժվարություններ հաղթահարելու կամք, երկաթյա առողջություն և ամենակարևորը՝ բավական շատ կանխիկ դրամ:

Մայրաքաղաքում գործում է ինը ծննդատուն, որոնցից երկուսը հիվանդանոցային բաժանմունքներ են: Սրանք սպասարկում են ոչ միայն մայրաքաղաքաբնակ հղիներին, այլև շրջաններից բարդ ախտորոշումներով գործուղված կանանց: Թվում է՝ ինը ծննդատունն անբավարար է միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքի համար, ու դրանք, բնական է, պետք է աշխատեն ծայրահեղ բեռնվածությամբ:

Վիճակը հենց այդպիսին էր մի քանի տարի առաջ: Ծննդատները լեփ-լեցուն էին, ծնարաններում միանգամից մինչև մեկ տասնյակ ծնունդներ էին ընդունվում: Ըստ գործող կանոնակարգի, տարեկան երկու անգամ նախատեսվող ախտահանիչ նորոգումներն ուղղակի անհնարին են դառնում:

Այսօր, ցավոք, վիճակը բոլորովին այլ է: Ծննդաբերական բաժանմունքները գործում են բերբեռնված՝ կաղված ծնելիության անկման հետ: Այդ անկումը մեծ չափերի է հասնում հատկապես սահմանամերձ շրջաններում, որտեղ ռազմական գործողություններ են ծավալվել: Նախորդ վեց ամիսներին վիճակագրությունն այդ է ապացուցում: Կաղաքում 1991 թ. (համեմատության համար վերցված է ծնելիության առումով ոչ ամենաբեղուն տարին) առաջին վեց ամիսներին ծնվել է 626, 1992 թ.՝ 512, Ֆաուշում 1991-ին՝ 428, 1992-ին՝ 362 երեխա: Ըստ դիտարկումների, անկումը տարեվերջին կավելանա: Պատկերը բարվոք չէ նաև Երևանում, ուր 1991-ին ծնվել է 10,721 երեխա, 1992-ին՝ 10,076:

Վիճակագրությունն ավելի սպառնալից ու ահազանգող է, երբ ուշադրություն ենք դարձնում ծնելիության ոչ միայն քանակական պատկերին, այլև որակական: Այսօր խիստ աճել է ներարգանդային թերություններով, բնածին արատներով ծնվող երեխաների թիվը, աճ է նկատվում նաև դժբախտ պատահարներից մահացության մեջ. այրվածքներ, տրանսպորտային պատահարներ, գենի հետ գործ ունենալու դեպքեր: Եթե 1991 թ. պատահարների զոհ է դարձել 3-14 տարեկան 20 երեխա, ապա 1992 թ-ին՝ 32 (բոլոր տվյալները բերված են 1000 երեխայի համեմատությամբ): Ցավալի դեպքերի արձանագրումը սրանով չի ավարտվում. 1992 թ. առաջին կիսամյակում գրանցվել է 192 մեռելածին երեխա:

Արևմտյան քաղաքակրթությունն աչքի է ընկնում մանկական մահացության ցածր ցուցանիշներով, որոնցով էլ պայմանավորված է հասարակության և առողջապահության զարգացման մակարդակը: Այս հարցում համեմատվում են հատկապես մինչև մեկ տարեկան երեխաների մահացության ցուցանիշները, իսկ ռիսկի ամենամեծ բաժինն ընկնում է երեխաների կյանքի առաջին յոթ օրվան: Մանկական մահացության մակարդակով, ըստ առողջապահության մոր և մանկան հարցերով փոխնախարար Վ. Դեմիրճյանի, Հայաստանը միջին ցուցանիշն է դրսևորում, իսկ ԱՊՀ երկրների մեջ 3-4-րդ տեղում է: Այո, միջին, սակայն այդ ցուցանիշները հանգստանալու հիմք չեն տալիս: 1991 թ. առաջին կիսամյակում մինչև մեկ տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 19,2 տոկոս էր, իսկ 1992 թ.՝ 28: Բացարձակ թվական աճ գրեթե չկա: Սակայն ծնելիության անկման տոկոսը բարձրացել է: Թվերը ոչինչ չեն ասի, եթե դրանց էության մեջ չխորանանք և չփորձենք պարզել պատճառները ու աղբյուրները: Մանկական մահացությունը բացարձակապես միայն որպես բժշկական ցուցանիշ դիտարկելը սխալ կլինի: Ըստ Դեմիրճյանի, այդ ցուցանիշի միայն 10 տոկոսն է բժշկական, մնացյալը սոցիալական, քաղաքական, էկոլոգիական բնույթ ունի:

Իսկապես, հասարակության այսօրվա վիճակն անդրադառնում է ծնելիության և մանկական մահացության վրա: Պատերազմական դրությունը, սոցիալական ծանր կացությունը, բարոյահոգեբանական մթնոլորտն անմիջապես ազդում են հղիների առողջության, պտղի նորմալ զարգացման և ծննդաբերության ընթացքի վրա: Հղիների կեսից ավելին տառապում է ֆոնային հիվանդություններով, նորմալ, առողջ ծննդաբերությունների քանակը խիստ նվազել է, ավելի ու ավելի հաճախակի է դառնում բժշկական միջամտության կարիքը: Կեսարյան ծնունդների քանակական աճը դրա ապացույցն է:

Ոչ լիարժեք սնվելուն, ֆիզիկական ու հոգեկան ծանրաբեռնվածությանը գումարվում է նաև էկոլոգիական ոչ բարենպաստ վիճակը: Վերը թվարկածներին բժիշկներն ավելացնում են նաև մի հանգամանք, որ վերջիններիս կարծիքով մամուլի քննարկման նյութ չէ: Սակայն հարցն այնքան ցավոտ է, որ հարկ է անդրադառնալ դրան: Դա մեր կանանց կողմից հիգիենայի կանոնները չպահպանելն է: Հայ կանանց բնականից ոչ խստապահանջ պահվածքը հիգիենայի հարցում վերջին շրջանում անբարենպաստ պայմանների շնորհիվ ավելի է խորացել: Տաք ջուր չկա, սառը՝ ընդհատումներով, գազ պարբերաբար չի լինում և եթե լողանալու ցանկությունն էլ մեծ չէ, ապա անմաքուր կյանքը սովորույթ է դառնում: Ինչ վերաբերում է հղիների սննդին, հատկապես կաթնային սնունդ ստանալուն, որ նման գների պայմաններում ոչ բոլորին է հաստ, առողջապահության նախարարությունը մարդասիրական օգնությունից պոկելով կարողացել է էշից-շատից կաթի փոշի հատկացնել հղիության վերջին շրջանում գտնվող կանանց:

Ծնելիության անկումը, բնածին արատներով ծնվող երեխաները և ընդհանրապես մայրության և մանկության պահպանման խնդիրները պետք է հատուկ պետական վերաբերմունքի արժանանան: Մանկածնության խթանման որոշակի հեռահար ծրագրերի անհրաժեշտությունը օրակարգի հարց է դարձել: Հակառակ դեպքում, տարիներ անց պարզապես չեն լինի նրանք, որոնց համար մենք այսօր աղում և աշխատում ենք:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԻՆ ԳՐՈՒՄ ԵՆ

Մեր ելույթից հետո

◆ «Բաղնիք գնալը մեր բանը չէ» հոդվածում հանգամանորեն անդրադարձել էինք մայրաքաղաքի բաղնիքների հարցին: Քննադատական խոսք էր ասվել հատկապես թիվ 2 բաղնիքի հասցեին, որն ամիսներ առաջ քաղխորհրդի գործկոմի կոմունալ ձեռնարկությունների եւ սպասարկման ոլորտի գլխավոր վարչությունը համարձակվել էր փոխանցել մի հզոր ասոցիացիայի, որը խոստանում էր հիմնովին վերակառուցել այն եւ համապատասխանեցնել մարդու ժամանակակից պահանջ: Սակայն կոլեկտիվը, անհասկանալի պատճառով, կտրականապես դեմ էր եղել այդ որոշմանը:

Հոդվածից հետո նշված բաղնիքի տնօրենը դիմել էր վարչության պետ Աշոտ Ղազարյանին՝ բաղնիքը վարձակալական հիմունքներով կոլեկտիվին տալու խնդրանքով:

Առարկություն չէր եղել: Միայն մի պայմանով՝ եթե տնօրենը երաշխիք ներկայացնի, որ կոլեկտիվը բաղնիքը վերակառուցելու համար ունի 15-20 միլիոն ռուբլի:

Սպասենք եւ տեսնենք...

◆ «Ինչո՞ւ են լալիս ծառերը» հոդվածը խիստ վրդովմունք էր առաջացրել ընթերցողների շրջանում. «Գրեցիք, հետո՞: Ի՞նչը փոխվեց, շրջխորհրդի գործկոմն առանց ծեր կարծիքը հաշվի առնելու թույլ է տալիս, որ կտրված ծառի տեղում շարունակվի կոոպերատիվի շինարարությունը», «Կարծում եք նրանք իրար հետ չե՞ն, կարծում եք այդ կոոպերատորը նրանց բարեկամներից չէ՞»:

Նման կարծիքների հետ չհամաձայնել չենք կարող, քանզի մենք եւս վրդովված ենք, որ օրը ցերեկով կտրեցին հսկայասաղարթ ծառը հենց քաղաքի կենտրոնական զբոսայգում, մեկ ժամում վերածեցին վառելափայտի եւ առանց վախի տարան ու մամուլի կարծիքն էլ բանի տեղ չդրեցին:

Այսօր ստիպված ենք մտածել, որ մեր ընթերցողներն իրավացի են՝ «փաստը կատարվել է շրջխորհրդի գործկոմի նախագահի եթե ոչ գրավոր, գոնե բանավոր թույլտվությամբ: Ուրիշ ինչո՞վ բացատրել նման բարբարոսությունը՝ կատարված կոոպերատորի եւ զբոսայգու գյուղատնտեսի կողմից»:

Մեր ահազանգից հետո շրջանի կանայք տնկիների շինարարման տեղամասի պետ որն. Հարությունյանը, երեւի թե վախեցած, խոստացավ «վաղը եւեթ նույն տեղում ծառ տնկել», ամառվա կեսի՞ն...

Եւ չտնկեց: Իսկ աշնանը, եթե հանկարծ ուզենա էլ, չի կարող տնկել, որովհետեւ կոոպերատիվի շենքն իր շրջապատով արդեն բետոնածածկ է:

Ծախեցին քաղաքի բոլոր նկուղները, հերթը հասավ զբոսայգիների՞ն...

Դե ինչ, շրջանի ղեկավարները երեւի այնքան հզոր են զգում իրենց տեղերում, որ չեն բարեհաճում անգամ պատասխանել մեր հոդվածին:

ԼԵՅԼԻ ԴՇԽՈՅԱՆ

Վանաձորում դադարեցվել է հացի արտադրությունը

Սեպտեմբերի 1-ի գիշերը հացի հերթերում անցկացրած քաղաքացիների մի սվար խումբ եկել էր քաղգործկոմ հետ բերելով ուսելու համար ոչ պիտանի չափազանց վատորակ հացի նմուշներ: Բողոքողներին ընդունեց քաղխորհրդի նախագահի բնակչության սպասարկման հարցերով տեղակալ Մայիս Խաչատրյանը, որին էլ խնդրեցին քարոզչություն արտադրվող հացի ցածրորակության պատճառները եւ դրությունը շտկելու համար ձեռնարկվող միջոցները:

«Դժգոհությունները, իհարկե, լիովին արդարացի են, ասաց նա: Վերջերս Բաղրամյանի շրջանից ստացված ալյուրը բոլորովին պիտանի չէ հացի արտադրությունում օգտագործելու համար: Այդ պատճառով էլ հրահանգ է տրված քաղաքում դադարեցնել հացաթխումը, մինչեւ բարձրորակ ալյուր ստանալը: Ստեղծված ծանր իրավիճակի մասին քաղաքային իշխանությունները հեռագիր են հղել հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, վարչապետ Խոսրով Հարությունյանին, գյուղատնտեսության եւ սթերումների նախարարներին»:

Հուսով ենք, որ հանրապետության կառավարությունը թույլ չի տա, որ տվի մասնվի 180 հազարանոց քաղաքը:

■

digitised by A.R.A.R.@

Սահմանների անձեռնմխելիությունը եվ ազգերի ինքնորոշման իրավունքը

ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Միջազգային իրավաբանական գրականության մեջ միջազգային իրավական կարեւորագույն նորմերը կամ սկզբունքները որակավորվում են կամ «հիմնարար» (fundamental), կամ «անքաժան» (inherent), կամ էլ «անօտարելի» (inalienable): Միջազգային իրավունքի այդպիսի հիմնարար սկզբունքներից է ինքնիշխան պետությունների սահմանների անձեռնմխելիությունը կամ, որ նույնն է, տարածքային ամբողջականությունը: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է գտել ՄԱԿ-ի կանոնադրությունում, Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում, Հելսինկիի խորհրդակցության եզրափակիչ ակտում եւ միջազգային իրավական այլ փաստաթղթերում:

Սահմանների անձեռնմխելիությունը նշանակում է, որ միջազգային իրավունքի սուբյեկտները՝ պետությունները, միջկառավարական եւ մյուս միջազգային կազմակերպությունները ճանաչում եւ հարգում են տվյալ պետության տարածքային ամբողջականությունը, նրա ինքնիշխան իրավունքներն իր տարածքի նկատմամբ: Պետությունը իր տարածքի նկատմամբ օժտված է գերիշխանությամբ եւ ինքն է որոշում տարածքի վարչական բաժանումը: Յուրաքանչյուր իրավական, քաղաքակիրթ պետության մեջ դա բնականոն երեւույթ է, եւ միջազգային հանրությունն էլ ընդունում է դա: Սակայն պետական սահմանները մեկընդմիշտ տրված եւ անփոփոխ չեն, մասնավորապես այն դեպքերում, երբ տվյալ պետությունը կամ կայսրությունը առաջացել է բռնությամբ եւ ուրիշ ժողովուրդներին գաղութացնելու ճանապարհով: Համաշխարհային պատմական փորձը, ինչպես նաեւ արդի ժամանակների քաղաքական իրադարձությունները աղացուցում են, որ այդպիսի «պետությունների» սահմանները անփոփոխ եւ անձեռնմխելի լինել չեն կարող, անխուսափելիորեն ենթարկվում են փոփոխման: Մեր ժամանակներում այդպիսի փոփոխություններ տեղի են ունենում հիմնականում ազգերի ազատ ինքնորոշման հիման վրա, սակայն տարբեր ճանապարհներով, կամ պետությունների վերամիավորմամբ (ԳՖՀ-ի եւ ԳԴՀ-ի միավորումը), կամ կայսրությունների փլուզման (ԽՍՀՄ-ի եւ Հարավսլավիայի օրինակը), կամ էլ «քաղաքակիրթ բաժանման» (Չեխիայի եւ Սլովակիայի բաժանումը) հետեւանքով: Այս «միավորումների» եւ «բաժանումների» հետեվանքով վերանայվում եւ ճշգրտվում են պետական տարածքները ու սահմանները, որտեղ արտասովոր եւ անօրինական ոչինչ չկա, քանզի այդ բոլորի հիմքում ընկած է ազգերի ինքնորոշման իրավունքը:

Ուրեմն, պետության տարածքային գերիշխանությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ տարածքի օրինական տերերը համաձայն են ապրել գերիշխող ազգի կամ ժողովրդի իշխանության ներքո: Խոսքը միմիայն վերաբերում է ազգային տարածքի վրա ապրող ժողովուրդներին, որոնք եւ համարվում են այդ տարածքի միակ օրինական տերերը: Իսկ երբ տվյալ ժողովուրդը հայտնի պատճառներով այլեւս չի ցանկանում մնալ իշխող ժողովրդի իշխանության ներքո եւ դա անում է ժողովրդավարական ձեւով, այսինքն՝ իր կամքն ազատ արտահայտելու ճանապարհով, ապա սովորեն պետությունները պարտավոր են հարգել ինքնորոշվող ազգի իրավունքը:

Ազգերի ինքնորոշման իրավունքը նույնպես իր իրավական ամրագրումն է ստացել ՄԱԿ-ի կանոնադրությունում, 1965 թ. դեկտեմբերի 20-ի «Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին» հռչակագրում, 1970 թ. միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում, Հելսինկիի խորհրդակցության եզրափակիչ ակտում եւ ՄԱԿ-ի մի շարք բանաձեւերում, միջպետական պայմանագրերում եւ այլ միջազգային-իրավական փաստաթղթերում:

Առաջին հայացքից թվում է, թե միջազգային իրավունքի երկու կարեւորագույն սկզբունքները միմյանց հակասում են, եւ հարցը կարող է մնալ փակուղի, ինչպես այդ փորձում է անել հարեւան հանրապետությունն Արցախի նկատմամբ: Սակայն դա այդպես չէ: Բարեբախտաբար, միջազգային իրավունքի տեսությունը եւ միջազգային դատական պրակտիկան այս հարցում որոշակի պարզություն են մտցրել: Այսպես, 1970 թվականին Միջազգային դատարանը մի գործի կապակցությամբ, հիմնվելով նաեւ միջազգային իրավունքի հեղինակավոր փորձագետների կարծիքի վրա, հանգել է այն եզրակացությանը, որ միջազգային իրավունքում գոյություն ունեն այնպիսի կարեւորագույն նորմեր կամ սկզբունքներ, որոնք իրենց նշանակությամբ վեր են մյուս «հիմնարար» սկզբունքներից եւ կրում են կարգադրիչ (իմպերատիվ) բնույթ: Այդպիսի կարգադրիչ նորմերն են. ագրեսիվ պատերազմի եւ ցեղասպանության արգելումը եւ դատապարտումը, ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը միջազգային հանրության կողմից: Վերոնշված նորմերի համակցությունը կազմում է jus cogens, այսինքն՝ կարգադրիչ նշանակություն ունեն բոլոր պետությունների համար: Ինչ խոսք, ինքնորոշման իրավունքի իրականացումը հնարավոր է միայն ինքնորոշվող ժողովրդի ազգային տարածքի վրա, միայն այդ դեպքում է, որ ինքնորոշման իրավունքի համար ծագած ազգային-ազատագրական պայքարը ձեռք է բերում իրավական եւ արդարացի բնույթ: Ուրեմն, տարածքի օրինական պատկանելության հարցը որոշվում է ոչ թե փաստացի տիրապետմամբ կամ զավթմամբ, ինչպես ջանում է ապացուցել հարեւան հանրապետությունը, այլ տարածքի ազգային պատկանելությամբ, իսկ սահմանների անձեռնմխելիության կամ տարածքային ամբողջականության կացությունը պայմանավորված է տվյալ տարածքի օրինական տերերի ինքնորոշման իրավունքով: Ինքնորոշման իրավունքը բացառում է ցանկացած բռնակցում, անեքսիա, այդ թվում եւ ժողովրդին բռնությամբ օտար ազգի պետական սահմաններում պահելը տարածքային ամբողջականության քողի տակ: Այստեղից էլ սահմանների անձեռնմխելիությունը կամ տարածքային ամբողջականությունը պետք է հիմնավորվի իրավականորեն, ոչ թե նրա փաստացի տիրապետմամբ: Տարածքի իրավական պատկանելության անտեսումը կնշանակի ընդհանրապես իրավունքի, այդ թվում եւ ինքնորոշման իրավունքի բացասում, որն, ինչպես տեսանք, անհարիր է արդի միջազգային իրավունքի պահանջներին:

Ուրեմն, ինքնորոշման իրավունքը լիակատար իրականացնելու համար Արցախի ազգային-ազատագրական պայքարը, այդ թվում եւ հարկադրված զինված դիմադրությունը, արդի միջազգային իրավունքի տեսանկյունից արդարացի է եւ օրինական: ■

Ովքե՞ր են մեր ազգուրացները

Իրոք, ովքե՞ր են հայոց մեջ ազգուրացները: «Պաշտոնական» կարծիքն ասում է՝ Վասակն ու վասակյանները: Հասարակ չէ. Վասակը հայախոս ու հայագիր է եղել եւ հայոց լեզվի զորավիգ, այլապես Կորյունը նրա հասցեին հայտնի գովասանքները գրած չէր լինի: Ուրեմն, վասակյաններն էլ նրա նման են եղել: Հայերի մեջ իսկական ազգուրացները հայոց լեզվի եւ հայկական դպրոցի հակառակորդներն են եղել եւ են: Հայաստանի լուսավորության նախարարը ամեն տարի օգոստոսի երկրորդ կեսին պաշարման մեջ է: Այս տարի էլ նույնն է: Կոիվ, աղմուկ, սպառնալիք, հայհոյանք, մեկը նախարարի սեղանից թղթերն առնում շպրտում է... Ի՞նչ են ուզում այս հայ «պապաններն» ու «մամաները»: Մի բան՝ իրենց զավակներին «փրկել» հայկական դպրոցից, տեղավորել ռուսական առաջին դասարանում:

– Տիկին, Դուք Հայաստանի քաղաքացի եք, ինչու՞ չեք ուզում, որ Ձեր զավակը հայկական դպրոց հաճախի, հայ մեծանա: Խոսում ենք, իհարկե, ռուսերեն: Տիկինն ասում է, որ հայերեն չգիտի:

– Ինձ պետք չէ ոչ ձեր Հայաստանը, ոչ ձեր դպրոցը:

– Բայց Դուք հայուհի եք, չէ՞:

– Հետո ինչ անենք, մեր ընտանիքում միայն ռուսերեն ենք խոսում, ինձ պետք չէ ձեր հայոց լեզուն: Հետո, ձեր հայկական դպրոցների մակարդակը շատ ցածր է, ես չեմ ուզում իմ որդուն հաշմանդամ դարձնել:

Մի հայ պարոն իմ հարցին, թե ինչու չի ուզում իր զավակին հայկական դպրոց ուղարկել, ասաց.

– Դա ձեր գործը չէ: Ես էլ, կինս էլ ռուսական կրթություն ունենք, այդ էր պակաս, որ դուստրս հայկական կրթություն ստանա: Ձեր բոռներին տվեք հայկական դպրոց: Ես հիմար չեմ:

Մի այլ հայ տիկին, որ զայրացած դուրս եկավ նախարարի մոտից, ասաց.

– Հայկական, հայկական, նադայելի:

– Ինչու՞, տիկին, մի՞թե ամեն ազգ իր զավակներին սեփական լեզվով չպիտի կրթի, այն էլ՝ իր հայրենիքում:

Ռուսերեն նետեց.

– Ես թքել եմ ձեր դպրոցի ու ձեր լեզվի վրա... Ու արագ հեռացավ:

Ահա այսպես: Երբ ուզում եք կենդանի ազգուրացներ տեսնել, օգոստոսի երկրորդ կեսին գնացեք լուսավորության նախարարություն: Լիքն են: Եւ ոչ ոք հայ ազգի այդ տականքներին անարգանքի սյունին չի գամում: Հակառակը, «ազգային» որոշ հեղինակներ «Մաշտոց» միավորմանը, լուսավորության նախկին երկու նախարարներին, որոնք հայ երեխաների առաջ փակեցին ռուսական դպրոցների դռները, պախարակում են: Գաղտնիք չէ, որ մեր տարբեր կուսակցությունների մի շարք ղեկավարներ ու գործիչներ բավական չէ, որ իրենք ռուսական կրթություն են ստացել (Հայաստանում), իրենց զավակներին էլ են ռուսական դպրոցներ խցկել եւ հիմա ազգասիրություն ու պահանջատիրություն են խաղում:

Սուտ են ամեն տեսակ ազգասիրություն, ազգայնականություն, եթե դուք հայոց լեզվի ու հայկական դպրոցի եռանդուն զորավիգ չեք: Այսօր ազգային լինելու միայն մեկ անհերքելի չափանիշ կա՝ որքանով եք դուք մասնակցում ռուսագիր Հայաստանը վերահայացնելու գործին, որքանով եք կռվում հայ երեխաներին ռուսական կրթության տալու դեմ: Մնացածը «հովվերգության ճյուղին կոպտկանի»: Անցած 77 տարում մենք, անընդհատ հողեր պահանջելով, մի թիզ չստացանք, բավական կորցրինք: Այդ նույն ժամանակամիջոցում եթե անհատները, ապա եւ «Մաշտոցը» մեր ռուսացման դեմ, հանուն հայացման չկռվեին, հիմա Հայաստանը դարձած կլիներ Չեռնոռուսիա:

Այսօր այսքան կուսակցությունների ու կազմակերպությունների մեջ հայոց լեզվի ու հայերի հայկական կրթության միակ զորավիգը Հայաստանում մնում է «Մաշտոց» միավորումը, որը, սակայն, անգամ մի սենյակ չունի իր հավաքները կազմակերպելու համար: Ամեն կերպ ջանում են թուլացնել «Մաշտոցի» գործունեությունը, եւ դա իր արդյունքը տալիս է: Օրինակ, հակառակ լուսավորության նախարարության երկու որոշումների (հաստատված ԳԽ նախագահության կողմից), Երեւանում հայերի համար բացում են ռուսական առաջին դասարաններ, նույնիսկ՝ ռուսական դպրոց: Սա ոմանք բացատրում են նաեւ նրանով, որ շատ հայեր ընտանիքով փոխադրվում են Կրասնոդար եւ Ռուսաստանի այլ քաղաքներ՝ միայն իրենց զավակներին հայկական դպրոցից «ազատելու» եւ ռուսական դպրոց տալու նպատակով:

Չեմ կարծում, որ ուրիշ ազգի մեջ էլ այսպիսի տականքներ լինեն:

Ինձ ասում են՝ *«Իսկ եթե ազգն ինքն ուզում է ռուսանալ, ինչ կարող ենք անել»*: Պատասխանս՝ *«Եթե դա ճիշտ է, ուրեմն մեր ազգը աշխարհում ապրելու իրավունք չունի»*: Բայց կարծում եմ՝ ամբողջ ազգը չէ, որ աղականված է, կա նաեւ առողջ, հայամտած զանգված: Ու թեեւ հայոց լեզվին եւ հայերի համատարած հայկական կրթության զորավիգներին Հայաստանում հալածում են՝ թերթերում պախարակում, անգթորեն չարախոսում, նույնիսկ ծեծում, աշխատանքից հեռացնում, նաեւ դատի տալիս (բոլորը փաստեր են), բայց նրանք՝ զորավիգները, քանի շունչ կա թերաններում, անհահանջ կռիվ են տալու հայոց մեջ եղած ազգուրացների դեմ՝ հանուն մեր երկրի լիակատար վերահայացման, հանուն մեզանում հայոց լեզվի բացարձականացման:

ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Ազատամարտիկը մեր օգնության կարիքն է զգում

ԼՂՀ ինքնապաշտպանության 5-րդ վաշտի ազատամարտիկ Վալերի Վլասի Ոսկանյանը, ծնված 1975 թ., վիրավորվել է Մարտակերտի շրջանի Չարեքտար գյուղը ազատագրելիս: Առտասահմանում բուժում ստանալու համար (արհեստական ծնկի տեղադրում) բացված է անձնական հաշիվ.

հհ 704702, Երեւան, Մաշտոցի շրջանի բաժնեգրային-առեւտրային արշինբանկ, կոդ 370101349:

Բարեգործական համերգ հօգուտ Արցախի

«Քիզնես» եւ «Պրոգրես» ֆիրմաները տեղեկացնում են Ձեզ, որ սեպտեմբերի 18-ին Կամերային երաժշտության տանը անց է կացվում բարեգործական համերգ՝ Արցախի գործիչների օգտին: Շտապեցեք մասնակցել բարեգործական միջոցառմանը:
Տեղեկությունների համար զանգահարել 52.66.84, 55.12.33
Բարեգործական մուծումները կարելի է փոխանցել Վերականգնման եւ զարգացման բաժնեգրային առեւտրային բանկի համար 467103 հաշվին (բանկի կոդը 70016710):
Համերգի սկիզբը ժ. 19-ին
Տոմսերը վաճառվում են Կամերային երաժշտության տան դրամարկղում:

«Բիզնես» ֆիրմայի նախագահ

digitised by A.R.A.R.@

Ինտերնացիոնալիզմ եւ ազգայնականություն

Ո՞րն է լավագույն միջինը, ո՞րն է ազգի գոյության պահպանակը: Մեզ առաջնորդող գաղափարները ինքնե՞րս ենք ընտրում, թե՞ հմտությամբ մեզ հրամցնում են

Սիրո եւ ատելության կրոններ, խայտաբղետ գաղափարախոսություններ, գիտատեխնիկական նվաճումների ընձեռած ֆանտաստիկ հնավորություններ, եւ, այնուհանդերձ, անվերջ հուսախաբությունների մթնոլորտում մարդկությունը վաղուց կորցրել է ուղենիշները, մոլորվել:

Հավերժական գոյատեւման դիմակավորումն այսօր այնքան բազմատեսակ եւ բազմաշերտ է, որ սովորական, միջին ունակությունների տեր մարդն ի վիճակի չէ կողմնորոշվել:

Մարդկային պատմությունն ամբողջությամբ բնազդականից գիտակցականի անցման գործընթաց է, որի ընթացքում մարդարարածի էության նեջ ասիճանաբար աճում է դատողականի մասը՝ ի հաշիվ բնազդականի: Բնազդականը ենթակա չէ քարոզչական ազդեցության: Եվ քանի որ բնազդականը վաղուց արդեն բավականաչափ թուլացած է, իսկ գիտակցականը դեռ շատ է հեռու բավարար լինելուց, հենց այդ անիլեսյան գարշապարին էլ միշտ խփել են եւ խփում են ամբողջ մարդկության կյանքն ու կայքը տնօրինող ուժերը:

Շուրջ երկու հազար տարի է, որ հակաբնական փոխհարաբերությունների քարոզիչներն այն դարձրել են միանգամայն բնական գոյատեւման հզորագույն զենք, որն այդ երկու հազար տարում հրապարակ է ելել, պատկերավոր ասած, երկու հազար դիմակով. մոնոթեիզմից մինչեւ աթեիզմ, բռնատեսությունից մինչեւ հանրապետություն, օլիգարխիայից մինչեւ անարխիա, մինչեւ պլուտոկրատիա:

Մարդկության փոքրաթանակ, բայց, անկասկած, առավել խելացի մասը, հակաբնական վարք քարոզելով մնացյալ «աղամորդիներին», ձգտել է մեկ նպատակի՝ երեւույթների լոկ մակերեսայինն ընկալող գիտակցությունը հակադրել իր իսկ էությանը:

Ընդհանուր առմամբ ցանկացած քարոզչության ուժերից վեր է հոգեղեն առողջ մարդուն հանգեցնել իր էության ժխտմանը, սակայն դրա ամենօրյա քարոզը կարող է հանգեցնել բնական ֆունկցիաների արգելակմանը, դանդաղեցմանը...

Հենց սա է այն գործնական նպատակը, որին ձգտել եւ ձգտում է հակաբնական փոխհարաբերությունների քարոզչությունը՝ վերը նշված բոլոր «իզմերի» դիմակի տակ:

Ամենաճարտար կեղծիքն իսկ վերջ ի վերջո բացահայտվում է: Նույնիսկ ամբոխն ասիճանաբար, թեկուզ դաժան գնով, բայց սկսում է կռահել խաբեությունը:

Սակայն մինչեւ միլիարդավոր զոհեր սեփական մաշկի վրա զգան «սիրո եւ հավասարության բազավորության» «բարեմասնությունները» եւ ծանծաղամիտ ուղեղներով վերլուծեն ու հասկանան, հսկայական ժամանակ կանցնի, իսկ պահանջվածից ավելի խելոք զոհերին, որոնք կհասկանան եւ կջանան հասկացնել չհասկացողներին, «կարգի արքուն պահապանները» կհայտարարեն «հերետիկոսներ», «հերձվածողներ», սատանայի կամ որեւէ տգեղ «իզմի» գործակալներ, եկեղեցու, պետության, ժողովրդի կամ ժողովրդավարության թշնամիներ... ըստ իրադրության պահանջի:

Պատմությունը ցույց է տվել, որ այդ պրոֆիլակտիկ գործընթացը տեւում է տասնամյակներից մինչեւ հարյուրամյակներ՝ ըստ հերթական ձեռնարկի կենսունակության:

Վերը նշված կրոնական ու հակակրոնական, քաղաքական եւ սոցիալ-տնտեսական ձեռնարկումները շահագործվում են մինչեւ բացահայտում: Այսինքն՝ մինչեւ այն պահը, երբ կիրառման օբյեկտ արարածների նշանակալից մասն է սկսում կռահել, որ աշխարհամերժ փարաջայի տակ միանգամայն աշխարհիկ մարմին կա, որն իր կենսական պահանջմունքները բավարարում է ուրիշներին այդ պահանջմունքներից հրաժարում քարոզելու վարձով:

Աշխարհի ռազմաքաղաքական եւ տնտեսական հաշվեկշռի գրեթե կեսը տնօրինող գերկայրության փլուզումը համաշխարհային կարգաչափի ուժերի մանրակրկիտ կերպով հաշվարկած հերթական ձեռնարկն էր, որն այս անգամ եւս պսակվեց հաջողությամբ...

Հարկ է արժանին մատուցել ձեռնարկատերերին...

Բայց արժե եւ պարզորոշ գիտակցել պատահածը, որը գրեթե նույնքան աղետաբեր եղավ մեր եւ կայրության մնացյալ ժողովուրդների համար, որքան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը. Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմները...

Սակայն փաստի գիտակցումն ինքնին ոչ մի իմաստ չի ունենա, եթե չփորձենք ըմբռնել նպատակը եւ հետեւություններ անել:

Այն, ինչն անվանեցինք «համաշխարհային կարգաչափի ուժեր», քաղաքատնտեսական ձեռնարկներում «առեւտրական կապիտալ» անդեմ անունն է կրում եւ գոյություն ունի շատ վաղուց:

Ժամանակային առումով դրա սկիզբն աղոտվում է կրետե-միքենյան դարաշրջանի խորքերում, իսկ տարածային առումով՝ Մերձավոր Արեւելքի եւ Միջերկրածովյան երկրներում:

Այն էքսկլուզիվ տարը, որն այսօր հիմնականում տնօրինում է համաշխարհային առեւտրական կապիտալը, նշված ժամանակներից սկսած, սփռվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում՝ արմատներն ու մազարմատները տարածելով ողջ երկրագնդով:

Հազարամյակների ընթացքում այն դանդաղ, բայց անշեղ, պոտենցիալներ է կուտակել, իր հզորացմանն ու ամրապնդմանը զուգընթաց՝ ճյուղավորել ամենազանազան կրոնական ու կրոնամերժ, քաղաքական եւ սոցիալ-տնտեսական հոսանքներ, բոլորն անխտիր՝ ինտերնացիոնալիստական...

Բնական եւ տրամաբանական է, որ նա ձգտում է արարել իր գոյությանն ու գործունեությանը նպաստող պայմաններ: Այդ պայմանների կարեւորագույն բաղադրիչներից է ցանկացած տան մեջ տնտիրոջը հավասար իրավունքներ ունենալու նախադայմանը, որն այլ կերպ կոչվում է ինտերնացիոնալիզմ:

Ինտերնացիոնալիստ էր Քրիստոսը: Ինտերնացիոնալիստ էր նաեւ հակամարտ հավատի հիմնադիրը՝ Մուհամեդը...

Ինտերնացիոնալիստական էին բոլոր կրոնները ժխտող Ֆրանսիական եւ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունները:

Ինտերնացիոնալիստական է այդ հեղափոխությունները ժխտող ներկա՝ «դեմոկրատական» դիմակով հանդես եկող հեղաշրջումը...

Չարժե՞ նկատել, որ վերջին երկհարյուրամյակում կայացած համաշխարհային կարգաչափի բոլոր ձեռնարկումները նախ՝ «պատահաբար» սկզբնավորված են նույն էքսոտարից, առա՝ այդ բոլորի միջով կարմիր թելի պես անցնում է ինտերնացիոնալիզմը...

Զարմանալի չէ, որ այս իրողությունը դեռ հարկ է հասցնել զանգվածային քարոզչությամբ առաջնորդված գիտակցությանը, բայց ցավալի է, երբ պաշտոնապես մտավորական հորջորջվողների մեծամասնությունն, ըստ էության, նույն մակարդակին է եւ չի տեսնում արտաքնապես իրարամերժ երեւույթների նույնությունը, նույնանդամությունը:

Մարդկությունը շուրջ երկու հազար տարի տառապում է ինտերնացիոնալիզմի քոնիկական ախտով, որի գերագույն խաբկանքը հանուն ներդաշնակության բնական տարբերությունների համահարթեցումն է, դիմազրկումը, մարդկության բնական բաղադրիչների տարալուծումը, ինչը միմիայն բացառել կարող է որեւէ ներդաշնակություն թեկուզ միայն այն պատճառով, որ դա տարբերություն է ենթադրում:

«Ասծո առջեւ բոլորը հավասար են», «ազատություն, արդարություն, հավասարություն», «պրոլետարիատի դիկտատուրա», այսօր էլ՝ անդեմ «մարդու իրավունքների դեկլարացիա»... առաջին՝ մակերեսային հայացքից թվում է քաղաքակրթության դրական նվաճումների ասիճաններն են...

Նույնքան «դրական» է մանկական այն երազանքը, թե «բոլոր ծառերը շատարիր դառնան»:

Մանկական այդ անմեղ երազանքը մենք ընկալում ենք ներողամիտ ժպիտով, գիտակցելով, որ ծառերը, «շատարիրանալով», չեն մեռնի, եւ կշարունակեն «շատարիրի» հումք պտղաբերել, բայց մեջբերված կարգակոչերի ինտերնացիոնալիստական հենքը նույնքան անմեղ չէ (շա՜տ մեղմ ասած):

Համապատասխան ժամանակաշրջաններից ոչ մեկում, համապատասխան կարգակոչերից ոչ մեկը ոչ միայն դույզն-իսկ չի շոշոփել ժամանակաշրջանի բարդությունները, այլեւ էլ, ավելի է խճճել դրանք:

Վերընթերցեք պատմությունը, կամ... նայեցեք այսօրվա օրվան:

Ինտերնացիոնալիզմի քարոզիչները ոչ միայն լոկ խելացի, այլեւ հանճարեղ էին եւ են: Նրանք հիանալի գիտեն, որ իրենց քարոզած սկզբունքներն ամբողջովին արհեստական, հակաբնական են եւ այդու՝ անիրագործելի:

Հետեւաբար ոչինչ չի վտանգվում:

Թույլը երբեք ուժեղի մրցակիցը չի դառնա, եւ ազնիվը չի հաղթի արիկային...

Վերը թվարկված բոլոր ինտերնացիոնալիստական ձեռնարկումներն ազգային օրգանիզմների ինքնապահպանման բնազդը դիմադրողականությունը, թուլացնելու պարզ նպատակն ունեն, որքան էլ վերամբարձ ու խնկաբույր է դրանց հղումն «առ աշխարհականս»...

Ինտերնացիոնալիստական թմրադեղի ներարկմամբ ազգային օրգանիզմն արհեստականորեն հիվանդացվում է, դիմադրողականությունը թուլացվում եւ օտարածին, խորթ պատվաստվածքը ներառնվում է նրա հյուսվածքների, սնուցման համակարգի մեջ:

Ահա, քրիստոնեական եւ մուսուլմանական կրոնների, լուսավորչական աթեիզմի, Ֆրանսիական եւ Հոկտեմբերյան հեղափոխությունների, ներկա դեմոկրատական հեղաշրջման շատ պրոգրամային եւ միակ նպատակը, որն, այնուհանդերձ, դեռ մնում է... **միջոց**:

Սովորական մահկանացուներիս էլ է այն որպես միջոց ներկայացվում, կենսածեւ, որն իր հավասար հնավորություններ է առահովում մարդկության բոլոր էքսոբաղադրիչների համար:

Այն էքսկլուզիվ տարը, որն այսօր հիմնականում տնօրինում է «արեւմտյան» կոչված աշխարհի կապիտալը, ինչպես վերեւում նշվեց, իր գործունեությունն սկսել է դեռ կրետե-միքենյան դարաշրջանում, վաշխառության միջոցով կապիտալի կուտակմամբ:

Ազգային պատնեշները վերացնող աղազգային կրոնների, ուսմունքների օգնությամբ այն սփռվել է գրեթե բոլոր երկրներում եւ պատվաստվել բոլոր ազգերին:

Մնացյալ մարդկությանս այդ խաղընկերը, անցած հազարամյակների ընթացքում, հիմնականում վաշխառության միջոցով, նախ մեր բաժինը բաժանեց մեզ հետ, իսկ այժմ առաջարկում է... ելած-չելածն ազատորեն առնել-ծախելու միատեսակ, հավասար իրավունք. ազատ շուկա... Յուրաքանչյուրն ի՛ր կարողության՝ չափով կարող է մասնակցել...

Մե՛ր տանը, մե՛ր ունեցվածքը մեզ հավասար իրավունքներով տնօրինելու նրա ձգտմանը խոչընդոտելու թույլ փորձեր է անում ազգային ինքնապահպանման բնազդը, որն, ինչպես նշեցինք, շուրջ երկու հազար տարի տառապում է քրոնիկական ինտերնացիոնալիզմով:

Այդ թույլ փորձերն իսկ աչալուրջ վերահսկվում են: Նշված էքսկլուզիվ տարի իրոք խելացի մտածողներն ավանդ են բողել իրենց ժողովրդին, որը կատարվում է անշեղորեն (ի տարբերություն մեր ավանդատուների ավանդների)՝ «Թույլ թշնամուն համարիր, ուժեղ եւ աչքդ միշտ պահիր վրան....»

Ազգային ինքնահաստատման ամենաչնչին երեւակում իսկույն կասեցվում է հնարավոր բազում միջոցներով: Խելացին (եւ հենց այդ պատճառով գործադրման օբյեկտների համար վտանգավորը) այն է, որ ձեռնարկվող միջոցները ոչ՝ թերանում, ո՛չ էլ գերազանցում են անհրաժեշտ նվազագույնը:

Այս հարցում էլ են նրանք հավատարիմ .ճիշտ սկզբունքի՝ չափավորությանը:

Հատկություն, որ գրեթե միշտ վրդովված ու կորցրած ենք լինում մենք:

Մարդկության ազգային գոյացումը -կամ տեսակների գոյությունը ընդհանրապես, դրանց միջեւ առկա մրցակցությունը, զարգացման առաջընթացի՝ տիեզերքի հոլովման նախադայմանն են, իմաստը:

Դա հիմք է տալիս ինտերնացիոնալիստներին՝ համոզված լինելու, որ իրենց գինաստեսակի գործադրումն էլ չի փոխի տիեզերական օրինաչափությունները, բայց անմրցելի առավելություններ կաղահովի մարդկության բաղադրիչներից մեկին:

Այս միտման գիտակցումն ինձ չի դադրում մարդկության այդ բաղադրիչը հանցագործ հայտարարել, ինչպես կաներ եւ բազմիցս արել է նա, երբ որեւէ այլ բաղադրիչ հանդգնել է իրեն բացառիկ հայտարարել:

Ազգայնության եւ ինտերնացիոնալիզմի երկհազարամյա պայքարի վերջին ցայտուն դրվագը. այո՛, ֆաշիզմն էր, որ հանցագործ հայտարարվեց:

Շատ ցանկալի կլիներ, որ ազգայնականորեն մտածողներն ընդունեին մի անխուսափելիությունն. **ամենադրական երեւույթի իսկ չափազանցումը հանգեցնում է բացասականի:**

Դա տեղի ունեցավ ազգային ինքնահաստատման, ինքնապահպանման ձգտման հետ հանձինս ֆաշիզմի:

Այն օրը, երբ Հիտլերը գերմանական ազգը հայտարարեց բացառիկ, գերազգ կոչված իշխելու աշխարհի մնացած ազգերի վրա, ինտերնացիոնալիստների ճամբարում տխուր ու ցնծություն: Այդ օրը Հիտլերը, Մուսոլինին ու Ֆրանկոն իրենց ժողովուրդներին դատապարտեցին պարտության, ազգայնականության գարշապարին դաջեցին մի մահացու խոցելի կետ:

Հենց որ ազգայնականությունը վերածվում է ազգայնամոլության («մոլություն» հասկացության բուն իմաստով), այն դառնում է ժխտելի, անմիջապես դատապարտվում է պարտության:

Ազգայնականության հակառակորդների, ցավոք, խելացի ռազմագետներն ահռելի նյութական միջոցներ եւ հետեւաբար լրատվության համաշխարհային ցանցը տնօրինելով, նախ ամեն կերպ խոչընդոտում են ազգային ինքնապահպանման ամեն մի երեւակում, իսկ երբ այնուհանդերձ դա տեղի է ունենում, վարկաբեկում են այն անխտիր բոլոր միջոցներով, որոնցից ամենաարդյունավետը դրա հումը, շեղումն է վեր կամ վար:

Դա իրագործվում է՝ աննկատելիորեն առաջ մղելով կամ ի ցույց դնելով որեւէ ազնիվ, ազգային զգացմունքայնությունից կակազողի, որի մոտ սառը դատողությունը շատ է զիջում ջերմ ցանկությանը, կամ ազգային շարժման նշված բեւեռներում (վեր կամ վար) գործակալների ներդրմամբ, որոնցից **վարինը** ազգայինը մատուցում է որպես մարդու իրավունքների դեկլարացիա, իսկ **վերինը** որպես նացիոնալ-սոցիալիզմ:

Ճշմարիտ ազգայինն, իհարկե այդ երկու բեւեռների միջնատարածքում է եւ միայն այդ բարեխառն գոտում կարող է բարգավաճել: Ահա ինչու հենց այդ միջնատարածքն է պահվում ինտերնացիոնալիստական մամլիչի ճնշման տակ, հնարավորին չափ անշշուկ, քաղքենու ուշադրությունը չգրավող միջոցներով:

Բայց դառնանք բուն խնդրին:

Գուցե իրոք ճի՞շտ են ինտերնացիոնալիստները եւ կարիք չկա առանձնապես մղկտալ ազգային առանձնահատկությունների վերացման, անդեմացման համար, ըստ ինտերնացիոնալիստների՝ բոլոր ազգերի լավագույն հատկանիշներն ամբարած համաշխարհային կերպարի հեռանկարի առջեւ:

Չեւական տրամաբանությամբ միանգամայն հնարավոր է, որ բնական ընտրության ճանապարհով, մեզ համար անորոշ աղագայում, կազմավորվի այդ գերազգային, համամարդկային կերպարը:

Բայց նույնիսկ այդ տեսակետից դիրքերի հանձնումը հանցագործություն է, քանզի, դադարեցնելով պայքարը, բնական ընտրության գործընթացը դարձնում ենք թերի, աղագա կերպարն անկատար:

Բայց դա միայն ձեւական տրամաբանությամբ:

Շատ ավելի իրական հիմքեր կան պնդելու, որ գոյությունն ընդհանրապես զանազանություն է, դրանց անդադար փոխազդեցությունը՝ դինամիկ հավասարակշռություն, որ է՝ ներդաշնակություն:

Այդ պատճառով է ինտերնացիոնալիստական նույնացման սկզբունքը հակասում հայտարարված ներդաշնակեցման նպատակին, քանզի, ինչպես ասվեց, ներդաշնակությունը տարբերություն է ենթադրում:

ՀՈՎՀ. ՎԱՍՈՒՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Ռուսական գործոնի աշխուժացումը հարավսլավական կոնֆլիկտում

Սերբիային դեմ գնալով, Ռուսաստանը հեռահար նպատակներ է հետապնդում

Խորհրդային կայսրության փլուզումից հետո ակնհայտ դարձավ, որ Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական ճգնաժամի պայմաններում այլևս հնարավոր չէ պահել նախկին զուտ խորհրդային ազդեցության ոլորտները: Ռուսաստանի ծանր ճգնաժամի խոր բնույթը հնարավորություն չի տալիս ակնկալել, որ այդ նահանջը կարճատև է: Եվ թերևս դժվարով է բացատրվում Ռուսաստանի դիրքորոշումը հարավսլավական և հայ-ադրբեջանական ճգնաժամերում:

Ռուսաստանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում պաշտպանեց Արևմուտքի բանաձևը և մտադիր է ռազմական մասնակցություն ունենալ հակասերբական արշավում: Առաջին հայացքից դա սեփական շահերին հարվածող քայլ է, քանի որ Ռուսաստանը վաղեմի կապեր ունի Սերբիայի հետ:

Բայց եկեք վերլուծենք, թե ի՞նչ կկատարվի այդ արշավի դեպքում: Իրաքի փորձը ցույց տվեց, որ սոսկ օդային հարվածներով հարցեր չեն լուծվում: Քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և այլ ոլորտների անհրաժեշտ տեղաշարժերը կատարվում են երկրի վրա: Եվ այս պայմաններում, հաշվի առնելով սերբերի Եվրոպայի լավագույն բանակներից մեկի հետ բախումը, Արևմուտքի համար հեշտ չի լինելու: Ավելին՝ հաշվի առնելով այն (ժողովրդագրական տեսակետից) արհեստական վիճակը, որ կստեղծվի Սերբիայի պարտության դեպքում, կարելի է ասել, որ նախկին Հարավսլավիան դառնալու է մշտական անկայունության գոտի: Այս դեպքում Սերբիայի միակ իրական դաշնակիցը մնալու է Ռուսաստանը, չնայած նրա մինչ այդ կատարած դերին: Եվ, ինչպես նաև Հայաստանի դեպքում, դրա պատճառն այն է, որ Ռուսաստանը ոչ թե լավագույն, այլ միակ իրական դաշնակիցն է: Ավելին, մենք ինքներս գիտենք մեր սեփական փորձից, թե ինչքան կենսունակ է կոմունիստական նոմենկլատուրան և ինչքան մեծ է նրա ազդեցությունը նույնիսկ այժմ:

Նույնը կարելի է ասել նաև Սերբիայի մասին, իսկ այդ խավի կապերը Մոսկվայի հետ անհնար է ժխտել: Յուրաքանչյուր դեպքում Ռուսաստանը ոչ միայն պահպանում է իր ազդեցությունը Սերբիայում, այլև ուժեղացնում է այն: Ռուսաստանը երբեք չէր համաձայնվի ընդառաջել Արևմուտքին, եթե չակնկալեր իր ազդեցության գոտի պահպանումը: Իսկ իրողությունն այն է, որ եթե Ռուսաստանը շաջակցեր Արևմուտքին, Հարավսլավիայի քայքայումը Արևմուտքը կիրականացներ առանց նրա, «քաղաքակիրթ» մեթոդներով: Առայժմ արևմտյան դաշնակիցները և Ռուսաստանը միասնական ճակատով են հանդես գալիս Սերբիայի դեմ:



Սակայն հարց է ծագում, ինչո՞ւ դաշնակիցները չօգտագործեցին իրենց ազդեցությունը Հարավսլավիայում և չկանխեցին աղետը: Դրան մանրամասն անդրադարձել է Տիգրան Հայրապետյանն իր «Ինչ են ուզում ցանում բալկանյան իրադարձությունները» հոդվածում, սակայն այս պարագաներում հատկանշական է Ռուսաստանի դիրքը: Ռազմական գործողությունների գնով Հարավսլավիայի քայքայումը որոշակիորեն ձեռնտու էր նաև Ռուսաստանին: Առաջին հերթին դա դաս է Արևմուտքին՝ սեփական կայսրությունը պահպանելու միտումով: Բացի այդ, Ռուսաստանը փորձում է շեղել հակառակորդների ուշադրությունը Արևելյան Եվրոպայի քաղաքական վակուումից և ԱՊՀ-ից և միաժամանակ ցուցադրում իր ազդեցիկ գոյությունը: Սակայն, ըստ իս, հիմնական նպատակը դա չէ: Անկարող լինելով տնտեսական և քաղաքական մեթոդներով զսպել Արևմուտքին և պահպանել իր կենսական շահերի ոլորտը Ռուսաստանը ձգտում է բաժանել, ջլատել հակառակորդին, ոռնգում կերպով շահարկելով իր միակ խաղաքարտը՝ բանակը, ինչն արդեն մասամբ հաջողվեց, եթե նկատի ունենանք Մեծ Բրիտանիայի և Հունաստանի հատուկ դիրքորոշումը Սերբիայի հարցում: Ռազմական միջամտությունը արտաքին հնարավորություն կընձեռի լուծել ներքին խնդիրներ:

Արտաքուստ պահպանելով ժողովրդավարական զգեստը և գոհացնելով սեփական ժողովրդավարներին, Ելցինը հնարավորություն կտա Ռուսաստանի ներքին կյանքում մեծ ուժ հանդիսացող զինվորականությանը զբաղվել իրենց սիրած գործով՝ պատերազմով, իսկ ժողովրդական լայն զանգվածների մեծամասնական շովինիզմը կրկնվարավի ռուսական զենքի իրական կամ երևակայական փառապանծ հաղթանակներով՝ «արդար պատերազմ» վարելով արևմտյան դրամով: Բացի այդ, պետք չէ մոռանալ նաև Ռուսաստանի զուտ մերկանտիլիստական հետաքրքրությունը. հերթական միլիարդները Արևմուտքից կորզելուց զատ, նախկին ԽՍՀՄ-ի պարտքը Հարավսլավիային անցնում է մոտ մեկ մլրդ. դոլարից, իսկ Սերբիայի, Խորվաթիայի զենքի զգալի մասը կամ խորհրդային է, կամ արտադրված է արտոնագրով:

Այսպիսով, Ռուսաստանը սանում է տաքառազինությունների և պահեստամասերի շուկան: Դրանից բացի, Ռուսաստանը հնարավորություն ունի խոչընդոտել կամ խափանել խորհրդային էլեկտրոնային զինատեսակների և սարքավորումների աշխատանքը, ինչը նույնպես կարևոր գործոն է բոլոր հակամարտ կողմերի համար: Արևմտյան երկրներից ոչ մեկը, չնայած լավատեսական ճառերին, պատրաստ չէ երկարատև ռազմական գործողությունների Հարավսլավիայում. ռուսական զինված աջակցությունը այս պարագաներում ամբողջովին փոխում է հակասերբական արշավի իմաստը, քանի որ Ռուսաստանը, պատերազմի ելքից անկախ, կդահպանի իր ազդեցությունը Սերբիայում: Ռուսական զորքերի երկարաժամկետ ներկայությունը Եվրոպայի կենտրոնում՝ Միջերկրական ծովի ափերին, իրենց իսկ հրավերով և աջակցությամբ, ոչ մեկին չի ուրախացնի: Եվ այս պարագաներում Արևմուտքը պետք է հաշվի նստի Ռուսաստանի շահերի հետ, ազդեցության ոլորտների բաժանման գործում: Եթե այդ պայմանը չհարգվի, Ռուսաստանն ամեն դեպքում լայն հնարավորություն ունի որոշելու, թե ում է այն զիջելու:

Գերմանա-ամերիկյան տանդեմի գործունեությունը բազմիցս ապացուցել է իր գոյությունը, և այդ համագործակցությունը դարձավ Բրիտանիայի հատուկ դիրքորոշման պատճառը: Գերիզոր Գերմանիան, որը կարգելակի Ռուսաստանի ազդեցությունը Եվրոպայում, կամ Միացյալ Եվրոպան ի վիճակի են զրկել Ռուսաստանին անգամ ԱՊՀ տարածքներից: Եվ այս պարագաներում հասկանալի է Ռուսաստանի նույնիսկ Գերմանիային աջակցելը, որպես միջոց վիժեցնելու թե Միացյալ Եվրոպայի գործընթացը և թե հակադրելու Գերմանիային մնացած Եվրոպային: Այս տրամաբանությամբ կարելի է միայն բացատրել Ռուսաստանի քաղաքականությունը, որպես դասական վարվելաձև՝ «Բաժանիր, որ տիրես...»:

ՀԱՅԿ ԲԱԼԱՆՅԱՆ

Ռուսաստանն առաջինն է, իսկ Հայաստանն ու Մոլդովան վերջինը

Չախողված հեղաշրջման առաջին տարեդարձի առիթով ամերիկյան «U.S.A.Today» հանդեսը դիմել է տնտեսաֆինանսական աշխարհում հայտնի Geonomics ինստիտուտին՝ գնահատելու նախկին ԽՍՀՄ-ի պարտքը Հարավսլավիային անցնում է մոտ մեկ մլրդ. դոլարից, իսկ Սերբիայի, Խորվաթիայի զենքի զգալի մասը կամ խորհրդային է, կամ արտադրված է արտոնագրով:

Այսպիսով, Ռուսաստանը սանում է տաքառազինությունների և պահեստամասերի շուկան: Դրանից բացի, Ռուսաստանը հնարավորություն ունի խոչընդոտել կամ խափանել խորհրդային էլեկտրոնային զինատեսակների և սարքավորումների աշխատանքը, ինչը նույնպես կարևոր գործոն է բոլոր հակամարտ կողմերի համար: Արևմտյան երկրներից ոչ մեկը, չնայած լավատեսական ճառերին, պատրաստ չէ երկարատև ռազմական գործողությունների Հարավսլավիայում. ռուսական զինված աջակցությունը այս պարագաներում ամբողջովին փոխում է հակասերբական արշավի իմաստը, քանի որ Ռուսաստանը, պատերազմի ելքից անկախ, կդահպանի իր ազդեցությունը Սերբիայում: Ռուսական զորքերի երկարաժամկետ ներկայությունը Եվրոպայի կենտրոնում՝ Միջերկրական ծովի ափերին, իրենց իսկ հրավերով և աջակցությամբ, ոչ մեկին չի ուրախացնի: Եվ այս պարագաներում Արևմուտքը պետք է հաշվի նստի Ռուսաստանի շահերի հետ, ազդեցության ոլորտների բաժանման գործում: Եթե այդ պայմանը չհարգվի, Ռուսաստանն ամեն դեպքում լայն հնարավորություն ունի որոշելու, թե ում է այն զիջելու:

Գերմանա-ամերիկյան տանդեմի գործունեությունը բազմիցս ապացուցել է իր գոյությունը, և այդ համագործակցությունը դարձավ Բրիտանիայի հատուկ դիրքորոշման պատճառը: Գերիզոր Գերմանիան, որը կարգելակի Ռուսաստանի ազդեցությունը Եվրոպայում, կամ Միացյալ Եվրոպան ի վիճակի են զրկել Ռուսաստանին անգամ ԱՊՀ տարածքներից: Եվ այս պարագաներում հասկանալի է Ռուսաստանի նույնիսկ Գերմանիային աջակցելը, որպես միջոց վիժեցնելու թե Միացյալ Եվրոպայի գործընթացը և թե հակադրելու Գերմանիային մնացած Եվրոպային: Այս տրամաբանությամբ կարելի է միայն բացատրել Ռուսաստանի քաղաքականությունը, որպես դասական վարվելաձև՝ «Բաժանիր, որ տիրես...»:

ՀԱՅԿ ԲԱԼԱՆՅԱՆ

Կուրիլյան կղզիների բնակիչների կեսը ուզում է «ճապոնացի» դառնալ

Հարավ-Կուրիլյան երեք կղզիների՝ Շիկոտանի, Կունաշիրի և Իթուրուպի բնակիչների 49,6 տոկոսը, հարցման համաձայն, հանդես է գալիս այդ տարածքները ճապոնիային միացնելու և նրա հետ խաղաղ պայմանագրի ստորագրման օգտին: Դեմ են եղել հարցման մասնակիցների 31,7 տոկոսը, իսկ 15,5 տոկոսը հավանություն են տալիս ռուս-ճապոնական միացյալ տարածքում ապրելու: Այս տվյալները «Յուկոսայիո» սոցիոլոգիական ծառայությանը վկայակոչելով, մամուլի ասուլիսում հաստատեցին Ռուսաստանի ԳԽ պատգամավորներ Ս. Յուշենկովը, Գ. Յակունինը և Լ. Պոնոմարյովը, որոնք օրերս են վերադարձել Կուրիլներից:

Նրանց խոսքերով, տեղական մամուլը խեղաթյուրում է այդ հարցում Ռուսաստանի ԱԳՆ-ի դիրքորոշումը: Յակունինը դրա համար մեղադրեց Սախալինի մարզի «նահանգապետին»:

«*Եթե Ռուսաստանն ու ճապոնիան լեզու չգտնեն, այս հարցը կքննարկվի միջազգային դատարանում*», նշեց պատգամավորը:

Այս հարցը մեկնակետային է լինելու սեպտեմբերի 13-ին սկսվող Բ. Ելցինի ճապոնիա այցելության ընթացքում: Չնայած կողմերի հակառակ դիրքորոշմանը, օրերս Մոսկվայում կայացած Անդրեյ Կոզիրևի և Միտիո Վատանաբեի հանդիպման ընթացքում հույս հայտնվեց, որ հարցը կկարգավորվի «փոխընդունելի» կերպով:

Պատգամավորների կարծիքով, ծանր տնտեսական դրությունից խուսափելու համար հարավային կուրիլցիներին իրենց բնական պաշարները տնօրինելու իրավունք պետք է տվի. իջեցվեն գանձվող հարկերը: Նրանց կարծիքով, անհրաժեշտ է, որպեսզի նախագահական համապատասխան հրամանագիրը ստորագրվի մինչև սեպտեմբերի 13-ը: ■

«Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է
Apple Macintosh
համակարգիչների տեխնիկական որակյալ սպասարկում

Դիմելով մեզ, դուք կարող եք ծեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

«Ազգ»-ի համակարգչային ծառայությունը ընդունում է նաև

- գովազդների
- խորհրդանիշների
- ֆիրմային նշանների
- կնիքների
- հրավիրատոմսերի
- տարբեր տեսակի ազդագրերի
- եւ ընդհանրապես. համակարգչային ծեւավորման պատվերներ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

Հասցեն՝ Երեւան, Հանրապետության 47, «Ազգ» թերթ. ☎ 58-18-41

Բորիս Ելցինի մեծ սխալը

«Լիտերատուրնայա գազետա» թերթում ԱՄՆ-ի Գուվերի կենտրոնի գիտաշխատող դոկտոր Մայքլ Մաֆֆաուլը գրում է. «Բորիս Ելցինի սխալն այն է, որ խորությունից հետո, երբ բոլորը դեմոկրատիայի կողմ էին և կոմունիստների դեմ, իսկ ազգայնականները դեռ այնքիսի ժողովրդականություն ձեռք չէին բերել, ինչպես այժմ, Ռուսաստանի նախագահը չնշանակեց Գերագույն խորհրդի նոր ընտրություններ: Այն ժամանակ հնարավոր էր ստեղծել այնպիսի ղեկավար կառուցվածքներ, որոնք ամբողջությամբ կաջակցեին նախագահին, կամ ծայրահեղ դեպքում ընդդիմությունը կլիներ ժողովրդավարական, այլ ոչ թե ֆաշիստական կամ կոմունիստական; ինչպես հիմա»:

Էստոնիայում նոր դասագրքեր

Այս ուսումնական տարվա համար Էստոնիայում հրատարակվել են մոտ հիսուն նոր դասագրքեր: Դանիայում տպագրվել է բուսաբանության դասագիրք, Շվեդիայում՝ անգլերեն լեզվի: Այս տարի ծնողները ստիպված են մեծ ծախսեր անել, այսպես՝ պայուսակները արժեն 150 կրոն, ամենաէժան գնդիկավոր գրիչները՝ 1.10 (արտասահմանյանը՝ 5-10), հասարակ մատիտը՝ 1.20 (ռետինով՝ 3.25), փայտե քանոնը՝ 1.20, ֆլոմաստերները՝ 47-63, վրձինները՝ 100-267 կրոն:

Ռուսաստանի գների պետկոմը կանխատեսում է թանկացումներ

Ինչպես հայտնի դարձավ «Ինտերֆաքս»-ին տեղեկատվական աղբյուրներից, Ռուսաստանի գինպետկոմը նախատեսում է հիմնական սպառողների գների նոր աճ մինչև տարեվերջ: Ի դեպ, հաշվի չի առնվել ուժանյութի գնի աճը: Կանխատեսման համաձայն, հացի մանրածախ գինը տարեվերջին կլինի 37 ռ., տաքը՝ 50-62 ռ., 3,5 տոկոս յուղայնությամբ կաթը՝ 19 ռ., մսի կիլոգրամը՝ 160-220 ռ.: Նախատեսվում է օդային մարդատար տեղափոխությունների սակագների ազատ արձակում: Երկաթուղում գները կաճեն, բայց կշարունակվեն կարգավորվել պետականորեն: Կոմիտեն գտնում է, որ ուժանյութի գինը նույնպես պետք է բարձրացնել՝ հաշվի առնելով գյուղատնտեսության ու մի շարք ավտոձեռնարկությունների փոխհատուցումը:

ԿՀՎ-ի նախկին գործակալը Ռուսաստանում

Էդվարդ Լի Հովարդը (ԿՀՎ-ի նախկին գործակալը, որն աշխատում էր ԽՍՀՄ օգտին), որին վաղուց հետապնդում են ԱՄՆ-ի իրավապահ մարմինները, անհայտ ուղղությամբ հեռացել է Շվեդիայից, ուր նա փորձում էր ձեռք բերել բնակվելու իրավունք: Ըստ ամերիկյան մամուլի, ամենից հավանականն է, որ նա նորից, ինչպես եւ 1985 թ., փախել է Ռուսաստան: «Առայժմ մենք չենք կարող հաստատել այն փաստը, որ Հովարդը գտնվում է Ռուսաստանում», «Լիտերատուրնայա գազետա»-ի թղթակցին ասաց Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության մամուլի կենտրոնի պետ Յուրի Կոբալենը: Նա հերքեց այն պնդումները, թե Հովարդը գտնվելով ԽՍՀՄ-ում, մոտ էր ՊԱԿ-ի նախագահ Վլադիմիր Կրյուչկովի հետ եւ նույնիսկ կապ ուներ օգոստոսյան խռովության հետ: Իսկ ի՞նչ էր անում լրտեսը Ռուսաստանում 1985-1991 թ.: Նա չէր զբաղվում հետախուզական գործունեությամբ, աղքատ էր որպես հասարակ օտարերկրյա քաղաքացի: ՊԱԿ-ի նախկին աշխատակից Միխայիլ Լյուբիմովը հիշում է, որ Հովարդը Մոսկվայում վարում էր ինքնամփոփ կյանք:

digitised by A.R.A.R.@

Զենքի վաճառքը երրորդ աշխարհի երկրներին կրճատվել է 40 տոկոսով

ԱՄՆ-ի կոնգրեսին ուղղված հաշվետվության վրա հենվելով հայտնում է «Նյու Յորք թայմս»-ը: Պաշտպանության նախարարության եւ հետախուզական ծառայությունների տվյալների հիման վրա կազմված հաշվետվության համաձայն, վաճառքի ծավալը 1990-ի 41,1 միլիարդ դոլլարից 1991-ին նվազել է մինչեւ 24,7 միլիարդ դոլլար: Ընդհանուր ծավալի 57 տոկոսը բաժին է ընկնում ԱՄՆ-ին (14 միլիարդ դոլլար): Ամերիկյան զենքի վաճառքը դակասել է 22 տոկոսով, ավելի փոքր, քան մրցակիցներինը. նախկին ԽՍՀՄ-ում՝ 55 տոկոսով (11,2-ից 5 միլիարդ դոլլար), Ֆրանսիայում՝ 87 տոկոսով (3,1-0,4 միլիարդ), Չինաստանում՝ 86 տոկոսով (2,1-0,3 միլիարդ): Հաշվետվության դասրասմանը մասնակցած Ռիչարդ Գրիմմեսը երեք հիմնական դասճառ է նշում. սառը դասերազմի ավարտը, ԽՍՀՄ-ի փլուզումը, զենքի հիմնական գնորդներից մեկին՝ Իրաքին հայտարարած էմբարգոն:

Ռուսաստանի կառավարությունը վճռական է

Ռուսաստանի արտաքին հետախուզության լրատվական կենտրոնի ղեկավար Յուրի Կոբալադեն, «Իզ-Դրես»-ին տված հարցազրույցում մեկնաբանելով Ռուսաստանի քաղաքացիներին Քաբուլից դուրս բերելու գործողությունները, նշեց իրավիճակի անսովորությունը. դա առաջին դեպքն էր, երբ հայրենակիցների փրկության համար Ռուսաստանի ղեկավարությունն այդքան վճռական գործողությունների է դիմում: «Այժմ մեզանում սկսել են գնահատել մարդկային կյանքը», նշեց Կոբալադեն: Այդ դասճառով գործողության ընթացքում օգտագործեցինք մեր բոլոր հնարավորությունները»: Յուրի Կոբալադեի կարծիքով, եթե Ռուսաստանի քաղաքացիները ամերիկացիների նման իրենց աղահով զգան աշխարհի բոլոր կետերում, կբարձրանա Ռուսաստանի հեղինակությունը:

Կոլորի հրաժարականի դահանջը մտավ խորհրդարան

Բրազիլիայի նախագահը, որ նախորդ օրը մերժել էր տեղի տալ հրաժարականի դահանջի առաջ, երեկ հանդիպեց կառավարության երեք անդամների, որոնք նույնպես դահանջում են նրա հրաժարականը կաբառակերության դեպքի բացահայտման դասճառով: Այդ նախարարները, այդ թվում՝ էկոնոմիկայի նախարար Մորեյրան, պնդում են, որ Կոլորը կամավոր ներկայացնի իր հրաժարականը: Նախագահի հրաժարման դահանջը դաշտոնապես մտավ խորհրդարան իմպիչմենտի օրենքով: Այն բաղկացած է 23 էջից եւ 5 ամբաստանություններ է ներկայացնում ընդդեմ նախագահի, որոնց թվում՝ դաշտոնական դիրքի չարաշահում եւ ստախոսություն իր անձնական եկամուտների կաղակցությամբ:

Մարտավարական զենքը միացյալ հսկողությամբ

Զինամթերքի հարցերով ԱՄՆ-ի եւ Ղազախստանի դիրքորոշումները համընկնում են, հայտարարեց զինուժի նկատմամբ հսկողության ԱՊՀ-ի հետ միացյալ հանձնաժողովի ԱՄՆ-ի ներկայացուցիչ Սթիվն Սթայները: Նա ասաց, թե դայմանագիր է ստորագրվել, ըստ որի Ղազախստանի համաղատասխան հանձնաժողովը ստուգայց կանցկացնի ԱՄՆ-ում: Սթայները նշեց, որ մարտավարական հարձակողական զենքերի մասին դայմանագրի ստորագրման աշխատանքները հաջող են ընթանում:

Մալյան թատերախումբը մեկնեց Եգիպտոսի փորձարարական թատրոնների 4-րդ փառատոն

Անկարելին կարելի դարձնող վարպետի սաներից սպասելիքներ ունենք

Հենրիկ Մալյան թատերախումբը, որն, ինչպես հայտնի է, 13 տարի առաջ է հիմնվել ճանաչված կինոբեմադրիչ Հենրիկ Մալյանի կողմից, օգոստոսի 29-ին մեկնեց Մոսկվա, այնտեղից Կահիրե՝ փորձարարական թատրոնների 4-րդ

փառատոնին մասնակցելու համար, հատուկ հրավերով:

Թատերախումբը, շնորհիվ իր հիմնադրի, նոր շունչ ու նոր չափանիշներ էր բերել հայ թատրոն, կոտրելով որոշ տաբուներ:

Մալյանի թատրոնում ընդունվում էին ոչ բացառիկ արտաքին ունեցող, սակայն դրա փոխարեն ներքինի վրա անընդհատ աշխատող, միջահասակ, նույնիսկ կարճահասակ, մնջախաղից եկող, թատերական ինստիտուտի ընդունելության քննություններից կտրված, Երեւանի ժողթատրոններից հատուկ ընտրված եւ մանավանդ «մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետի» թատերական բաժնի Հենրիկ Մալյանի ուսանող շրջանավարտները: Թատերական ինստիտուտի ընդունելության քննություններից կտրված Աշոտ Ադամյանը («Կտոր մը երկինք» ֆիլմի Թորիկը) չէ՞, որ անկարելին կարելի դարձնող Հ. Մալյանի արվեստի շնորհիվ իր ստանձնած գլխավոր դերերով հանրաճանաչության եւ արտասահմանի բազում կինոհանդիսատեսի սրտ գրավեց: Թատրոնը մինչեւ օրս շարունակում է շշմեցնել հանդիսատեսին իր դրոֆեսիոնալ մակարդակով. Մերձբալթիկայում, Բուլղարիայում, Սիրիայում, իսկ այժմ էլ Եգիպտոսում:

Սփյուռքահայ դրոֆեսիոնալ թատերագետ, համաշխարհային թատրոնի մեծ վարդետներից Պիտեր Բրուքի նախկին աշակերտ եւ գործընկեր դրն. Արքի Հովհաննիսյանը նդատակ էր դրել Մալյանի թատրոնը աշխարհին անդայման ծանոթացնել, որի համար ներկայումս ծավալուն աշխատանքներ է տանում:

Այսօր Հ. Մալյանը չկա, սակայն կան նրա ֆիլմերը, բեմադրությունները, դուստրը՝ ռեժիսոր Նարինե Մալյանը, աշակերտներ Գրիգոր Բաբայանը եւ Աշոտ Ադամյանը, որոնք կարծես հերթափոխում են թատրոնի գլխավոր ռեժիսորությունը եւ վերջապես կան իր «մալյանական» դերասանները, որոնք երեւանյան ձմեռային ամենածանր օրերին, առանց ջեռուցման, կուլիսներում դողդողալով, համառությամբ գրեթե ամեն երեկո բեմ էին ելնում:

Մալյանի թատերախումբը, սեդտեմբերի 1-10-ը դաշտոնապես մասնակցելով Եգիպտոսի փառատոնին, դետք է ներկայացնի Հայաստանի թատերասերներին քաջ հայտնի Հ. Մալյանի բեմադրած Հովհաննես Թումանյանի «Հեքիաթները»:

Օդանավակայանում մեր զրուցակիցն էր թատրոնի գլխավոր ռեժիսոր Աշոտ Ադամյանը, որն ասաց, թե *«Հայաստանն առաջին անգամ է մասնակցում միջազգային փառատոնի, որի համար բավականին դատասխանատվություն ենք զգում: Դիտի ջանանք ամեն ինչ անել, որդեսզի հայ մարդու, արվեստագետի, թատրոնի վարկը այնտեղ բարձր դահենք»:*

Թատրոնի 13 անդամների եւ արտգործնախարարության բարգմանչի ճամփարդական բոլոր ծախսերը 1 մլն ռուբլի, իր վրա է վերցրել դրն. Հովան Սարիբեկյանը:

Նշենք նաեւ, որ եթե չլիներ «Հայէլեկտրո» գործարանին կից «Արաֆս» մարզական կոմբինատի շենքը, Հ. Մալյան թատերախումբը հնարավոր է փողոցում մնար, քանի որ Երեւանի Կինոյի տան ղեկավարությունը թատրոնի ձեռքից օր-օրի սենյակներ խլելով, կացնահարում է՝ թատրոնի գոյատեւման ջանքերը, փոխանակ ի հիշատակ մեծ վարդետի օգտակար լինելու նրան:

Կարճ ասած, անկարելիները կարելի դարձնող Մալյան թատերախմբից տակավին շատ անակնկալներ ու սպասելիքներ ունենք:

ՐԱՖՖԻ ՀԵՐՍՈՆ ԱՐԱՔՍ

Լույս տեսավ Սլավիկ Չիլոյանի ժողովածուն

«Նաիրի» հրատարակչությունը առաջին անգամ լույս է ընծայել վաղամեռիկ բանաստեղծ Սլավիկ Չիլոյանի բանաստեղծությունների ժողովածուն: Այն փորձ է ամբողջացնելու իսկական բանաստեղծի կերպարը, որ մինչ այդ թափառում էր մամուլի էջերում ցրված բանաստեղծությունների եւ ընկեր-բարեկամների դատմությունների մեջ:

Չիլոյանը «գեղեցիկ» կյանքով չի ապրել, ոչ էլ ցուցադրական կեցվածք էր ընդունում ի բողոք ժամանակների: Նրա դոեզիան նույնդես ֆիրք չէր ժամանակների ծեւաւորություններին, որ ցավագին ճիգ էր գործադրում գտնելու ինքն իրեն: Այն թեթեւությունը, որով տրվում էր նրան բանաստեղծությունը, իրականում ծանր ապրումների բյուրեղացած վերարտադրումն էր զարմանալիորեն հոգեհարազատ հայ տոհմիկ բանաստեղծության արարման կերպին: Չիլոյանի դոեզիան ինչ-որ տեղ նաեւ աշխարհին փիլ այլ կերպ նայելու ուղենիշ է: Ժողովածուն, կարծում ենք, ընդունելություն կգտնի: ■

«21» շաբաթաթերթը առաջարկում է մամուլի մասնագիտական համերաշխություն

«...Մեր մամուլը, իմա՝ չորրորդ իշխանությունը, այսօր դեռ «շատախոս» է: Շատախոս է, քանի որ գործ չի անում, չի կարող անել: Ու ցավն էլ էն է, որ նրա խոսելու վրա, մեղմ ասած, բիած ունեն: Իրական իշխանություն դառնալու ճանապարհին առաջին ամենակարեւոր քայլերից մեկը մասնագիտական համերաշխությունն է. ասել է թե՝ օգնենք իրար, որ մամուլը չվերածեն խմբակների փայտիկի շարժումով երգող միաձայն ու միակամ երգչախմբի...»: Այս խոսքերով այսօր լույս տեսավ «...21...»-ը գունավոր, պատկերազարդ երիտասարդական-ուսանողական շաբաթաթերթի հերթական համարը, որ գլուխ-գլխի են հավաքվել կողքի նկարում պատկերված թերթը: Հույս ունենանք, ոչ ժամանակավոր... ■

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Շախմատային կենդանի լեգենդն իրո՞ք անդարտելի է

Շախմատասերները միշտ անհամբերությամբ են սդասել Ռոբերտ Ֆիշերի շախմատային վերադարձին:

Անդարտելի չեմդիոնը 20 տարվա ինքնամեկուսացումից հետո դուրս է եկել «քաֆսոցից»:

Շախմատային կենդանի լեգենդը, 1972 թվականին Ռեյկյավիկում համոզիչ ոճով առավելության հասնելով Բորիս Սդասկու նկատմամբ, նվաճեց աշխարհի չեմդիոնի կոչումը, բայց հետո հրաժարվեց խաղալ Անատոլի Կարդովի հետ եւ գահընկեց եղավ առանց դարտության: Հրաժարվեց սկզբունքայնության դատճառով՝ աշխարհի առաջնության մրցակցի իր կողմից առաջարկված փոփոխություններ հարցում համաձայնության չգալով ՖԻԴԵ-ի հետ: Տարիներ անց, այնուամենայնիվ, Ֆիշերը հասավ իր նդատակին: Սդասկու հետ նոր մրցամարտն անցկացվում է դեռ այն ժամանակ նրա կողմից առաջարկված մրցակարգով:

Մրցամարտը շարունակվելու է մինչեւ կողներից մեկի տասներորդ հաղթանակը, եթե որեւէ դարտիա ոչ-ոքի ավարտվի մեկ ժամից դակաս ժամանակահատվածում, կխաղացվի հերթականը:

Դարտիաները կշարունակվեն մինչեւ վերջ, այսինքն առանց հետաձգվելու: Ֆիշերը տարիներ շարունակ դայքարում էր խորհրդային շախմատային «մեքենայի» դեմ, որից շատ է տուժել: Նրա նմանատիպ առաջարկները մարդկայնորեն հասկանալի էին եւ միգուցե ճիշտ: Ֆիշեր-Սդասկի նոր մրցամարտը հսկայական հետաքրքրություն է առաջացրել շախմատասերների շրջանում: Իհարկե, ինչպես նշում է շախմատային հայտնի տեսաբան, միջազգային գրոսմայստեր Նիկոլայ Կրոգիուսը, ներկայիս մրցամարտն իր կարգով եւ դարտիաների որակով չի կարող հավասարվել նույն մրցակիցների 1972 թվականի մրցամարտին, սակայն այսօր բոլորին հետաքրքրում է, թե ինչ մարզավիճակում է գտնվում 49-ամյա Ֆիշերը: Ինչ խոսք, ժամանակը միշտ էլ աճում է իր գործը, սակայն Ֆիշերը բացառություն է եղել:

Բորիս Սդասկի

Առդյոք աշխարհի նախկին չեմդիոնը, որն իրեն շարունակում է աշխարհի չեմդիոն համարել, հիմա՞ էլ անդարտելի է:

Կկայանա՞ արդյոք Խասդարով-Ֆիշեր մրցամարտը: Կբացահայտվի՞ շախմատային լեգենդի հանելուկը:

Ամեն չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, Կիրակի օրերը լուրեր սդասենք Ֆիշեր-Սդասկի մրցամարտից: ■

Իվանչուկ, Անանդ, Հակոբյան, ո՞վ է հաջորդը

Հոկտեմբերի 14-31-ը Արգենտինայում կանցկացվեն մինչեւ 20 տարեկան շախմատիստների եւ շախմատիստուհիների աշխարհի առաջնությունները: Հայաստանն այդ մրցումներում ներկայացնելու են Էլինա Դանիելյանն ու Հովիկ Դանիելյանը:

Այս տարիքային խմբի աշխարհի առաջնությունները հեղինակավոր են համարվում եւ իրենց կարգով զիջում են միայն մեծահասակների աշխարհի առաջնություններին:

Հիշեցնենք, որ աղջիկների եւ տղաների մյուս բոլոր տարիքային խմբերի աշխարհի առաջնություններն անցած ամռանն անցկացվեցին գերմանական Դույսբուրգ քաղաքում, որտեղ մեր երկու շախմատիստները հասան փայլուն հաջողության. Էլինա Դանիելյանը 14 տարեկանների մեջ դարձավ աշխարհի չեմդիոնուհի, իսկ Հովիկ Դանիելյանը մինչեւ 18 տարեկանների մրցաշարում գրավեց դատվավոր 2-րդ տեղը:

Սովորաբար 20 տարեկանների աշխարհի առաջնություններում հաղթանակած շախմատիստները հետագայում դառնում են 1-ին մեծության գրոսմայստերներ: Հիշենք վերջին չեմդիոններին՝ Վասիլի Իվանչուկ, Վիշվանաթան Անանդ, Վլադիմիր Հակոբյան:

Աշխարհի արգենտինյան առաջնության մրցաճակատային ֆոնդն էլ վատ չէ՝ 7400 շվեյցարական ֆրանկ (մոտավորապես 6000 ամերիկյան դոլլար):

Էլինա Դանիելյանը հրավեր է ստացել նաեւ Հնդկաստանի շախմատի ֆեդերացիայից: Բանն այն է, որ Կալկաթայի Ալյոխինի անվան զախմատի ակադեմիան հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 8-ը հերթական ավանդական մրցաշարն է անցկացնելու, որի մասնակիցների թվում կլինեն աղջիկների տարբեր տարիքային խմբերի աշխարհի չեմդիոնուհիներն ու փառնձին երկրների առաջնությունների հաղթողները, թվով 40 հոգի, որոնք շվեյցարական մրցակարգով կվիճարկեն 30 հազար ռուփի դրամական դարգեւներ:

Մի բան սակայն դարզ է Էլինա Դանիելյանը դժվար թե հասցնի մասնակցել այս մրցաշարին: ■

ՀՀ ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնություն

Եզրափակիչ փուլ (1-12-րդ տեղեր)

1-ին տուր

«Կանաչ»-ՀՄՄ-ՖԻՍԱ	1:3
«Վան»-«Բանանց»	2:4
«Ձվարթնոց»-«Սյունիք»	3:2
«Կոտայք»-ՀՄԸՍ	0:3

Մրցաշարային աղյուսակը սեդտեմբերի 3-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	10	8	2	0	23-3	18
2. ՀՄԸՍ	11	7	3	1	28-12	17
3. Բանանց	11	7	2	2	22-13	16
4. Վան	11	6	1	4	18-17	13
5. Արարատ	10	5	3	2	17-11	13
6. Կոտայք	11	5	2	4	15-14	12
7. Սյունիք	11	3	3	5	21-23	9
8. Կիլիկիա	10	3	2	5	15-18	8
9. Ձվարթնոց	11	2	4	5	16-24	8
10. ՀՄՄ-ՖԻՍԱ	11	2	3	6	10-19	7
11. Նաիրի	10	0	4	6	3-17	4
12. Կոտայք	11	0	3	8	13-29	3

Բաժինը վարում է Սուրեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Եւ զինադադարը խախտեցին, եւ Հայաստանին մեղադրեցին

Հայ-ադրբեջանական 60-օրյա զինադադարի առաջին իսկ օրը ադրբեջանական կողմը խախտեց այն՝ գնդակոծելով ու հրետակոծելով Հայաստանի սահմանամերձ մի շարք շրջաններ: Իսկ Ղարաբաղում պատերազմը շարունակվում էր նույն ուժգնությամբ: Նույն օրը առավոտյան Հայաստանի նախագահի քաղաքական վերուծության հաշվետվությամբ խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը Ադրբեջանին մեղադրեց զինադադարի մասին համաձայնագիրը խախտելու մեջ: Արդեն երեկոյան Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե հայ-ադրբեջանական սահմանում լարվածության որոշակի մեղմացում է նկատվում:

Ընդհանրապես, այդ օրը Հայաստանի սահմանամերձ շրջանների իրավիճակի մասին ստացված տեղեկությունները խիստ հակասական էին ու իրարամերժ, եւ մենք լրագրողներս, պարզապես կրակ էինք ընկել: Պետական գերատեսչություններից մեկը հայտնում էր, թե Հայաստանի սահմանի առանձին տեղամասերում կասաղի մարտեր են մղվում, մեկ այլ գերատեսչությունից հերքում էին այդ տեղեկությունները, երրորդն անտարբեր կեցվածք էր ընդունում... Վերջին հաշվով էականն այն է, որ զինադադարի խախտման վերաբերյալ Հայաստանի պաշտոնական տեսակետ կարծես թե այդպես էլ չձեւավորվեց, եւ Ադրբեջանը լրատվական պատերազմում եւս մի փայլուն հաղթանակ տարավ: Նույն օրը երեկոյան Ռուսաստանի «Նորություններ» հեռուստաձրագրով հայտարարվեց, թե Հայաստանից լուրեր չունենալու պատճառով ստիպված են հաղորդել միայն Ադրբեջանի տեսակետը, համաձայն որի էլ, բնականաբար, Հայաստանն է խախտել զինադադարը: Իսկ «Նորություններ» ծրագիրն, ինչպես հայտնի է, ԱՊՀ երկրներում կատարվող իրադարձություններն անկողմնակալորեն մեկնաբանողի համարում ունի եւ հեռարձակվում է բազմաթիվ երկրներում:

Զարմանալի է, այդ ինչպե՞ս է պատահում, որ պետական մի քանի գերատեսչություններ նույնիսկ լրատվության նման կարեւորագույն բնագավառում չեն կարողանում համաձայնության գալ, երբ ամեն ինչ այնքան էլ բարդ չէ. պարզապես պետք է ասել ճշմարտությունը: Եւ սա այն դեպքում, երբ Ադրբեջանի համապատասխան գերատեսչությունները կարողանում են նույնիսկ ամենաանհեթեթ սուտն այնպիսի միասնական համոզվածությամբ ներկայացնել, որ հաճախ քիչ է մնում մենք էլ հավատանք:

Վերջապես Հայաստանում գոյություն ունի՞ որեւէ մարմին, որը պետք է մշակի ամենատարբեր հարցերում Հայաստանի պաշտոնական տեսակետն ու ներկայացնի միջազգային լրատվական գործակալություններին, թե՞ այստեղ էլ ամեն ինչ բարձիթողի վիճակում է: ԱԲ.

ՀՀ կապիտալ շինարարության վիճակը

Ընթացիկ տարում ՀՀ շինարարությունը ճգնաժամի մեջ է, ինչը բնորոշվում է ներդրումների գրեթե լրիվ բացակայությամբ: Ընդ որում, ՀՀ կառավարության 1992 թ. ապրիլի 1-ի թիվ 187 որոշմամբ նախատեսվում է կատարել 6500 միլիոն ռուբլու կապիտալ շինարարական աշխատանքներ (հաշվի առնելով Ռուսաստանի տրամադրած 500 մլն. ռուբլու վարկը): Մինչեւ հուլիս ամիսը կատարվել է նախատեսված աշխատանքների 35,5 տոկոսը: Այս տարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վիճակի ուսումնասիրմամբ զբաղվող հանրապետական գործադիրների վարչությունը Երեւանում անցկացրեց շահագործման հանձնված շենքերի ստուգում: Ինչպես պարզվեց, երբ խորհրդի կապիտալ շինարարության վարչության շահագործման հանձնած շենքերի շատ բնակարաններում բացակայում են էլեկտրասարքերն ու սանտեխնիկան: Մյուս կազմակերպությունների կառուցած շենքերում էլ վիճակն ավելի բարվոք չէ: Այսօր Հայաստանում չկա մի կազմակերպություն, որը կարողանա հսկել շինարարությունում տիրող իրավիճակը: Այս ամենը ժողովրդի մեջ դժգոհություն է առաջացնում: ■

Բաքվում մահվան դատապարտված հինգ հայերը դեռեւս ողջ են

amnesty international

URGENT ACTION

Վերջերս խմբագրություն այցելեց «Միջազգային ներում» կազմակերպության հայ անդամներից մեկը եւ հրապարակելու խնդրանքով մեզ հանձնեց այդ կազմակերպության շրջաբերականը:

Հրաչիկ Պետրոսյան, Գագիկ Հարությունյան, Առնո Մկրտչյան, Արվիդ Մանգասարյան եւ Գառնիկ Առուսամյան. «Միջազգային ներում» կազմակերպությունը տեղյակ է, որ վերը նշված հինգ հայերը, որոնք 1992 թ. մայիսի 16-ին պետք է գնդակահարվեին, դեռեւս ողջ են, եւ նրանց գործերը վերանայելու է Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը:

Հունիսի 23-ին Բաքվի Բայիլովի բանտում մի բարեգործական կազմակերպության պատվիրակություն հնարավորություն ունեցավ հանդիպել այդ հինգ անձանց հետ:

«Միջազգային ներումը» բոլոր դեպքերում դեմ է մահապատժին: Նա կոչ է արել Էլչիբեյին օգտագործել իր սահմանադրական իրավունքը եւ մահվան դատվճիռները, որ կայացվել էին Հրաչիկ Պետրոսյանի, Արվիդ Մանգասարյանի, Առնո Մկրտչյանի, Գագիկ Հարությունյանի եւ Գառնիկ Առուսամյանի նկատմամբ, փոխվեն ավելի մեղմ պատժամիջոցի:

Այդ հինգ անձինք մահվան են դատապարտվել Բաքվում, 1992 թ. մարտի 16-ին, Ադրբեջանի Գերագույն դատարանի կողմից: Նրանք մեղադրվում են Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքում ադրբեջանցի մի լրագրողի եւ երեք այլ զինված անձանց սպանության մեջ:

«Միջազգային ներումն» անհանգստացած է, որ նշված անձանց Ադրբեջանի Գերագույն դատարանը դատապարտել է որպես առաջին աստիճանի դատարան, հետեւաբար նրանք զրկվել են դատավճիռը բողոքարկելու իրավունքից:

«Միջազգային ներում» կազմակերպությունը դիմում է իր անդամներին՝ հեռագրեր եւ նամակներ ուղարկել նախագահ Էլչիբեյի, ադրբեջանական այլ բարձրաստիճան պաշտոնյաների հասցեով, կոչ անելով նշված հինգ անձանց մահվան դատավճիռները փոխարինել մեղմ պատժամիջոցով:

«Միջազգային ներում»ը չեզոք դիրք է գրավում հայ-ադրբեջանական հակամարտության հարցում եւ տվյալ դեպքում առաջնորդվում է բացառապես մահապատիժը իսպառ վերացնելու նպատակներով:

Հասցեները նշված են «ՄՆ»ի փաստաթղթում: ■

Իրանի խորհրդարանն առաջարկում է Հայաստանի ԳԽ-ին համագործակցել

Երեքշաբթի օրը Հայաստանի Հանրապետության ԳԽ-ի նախագահ Բաբկեն Արարքցյանին Հայաստանում Իրանի գործերի ժամանակավոր հավատարմատար Ահմադ Սոբհանին հանձնեց Իրանի Մեջլիսի նախագահ Ալի Աքբար Նոստեհ Նուրիի դիմումը, որում Իրանի եւ Հայաստանի միջեւ միջխորհրդարանական համագործակցությանը նպաստելու պատրաստակամություն է հայտնվում:

Իրանական դիվանագետի հետ զրույցի ընթացքում Բաբկեն Արարքցյանը ողջունեց հարավային հարեւանի խաղաղարար ջանքերը՝ ուղղված դարաբաղյան առճակատման խաղաղ կարգավորմանը եւ հույս հայտնեց, որ դրանք կշարունակվեն, հայտնում է «Ինտերֆաքս» գործակալությունը: ■

«Նոր հազարամյակի արդյունաբերողներ» Մոսկվայում

Սեպտեմբերի 5-ից 8-ը Ռուսաստանի մայրաքաղաքում կկայանա «Նոր հազարամյակի արդյունաբերողներ» միջազգային համաժողովը, որի նպատակը, կազմակերպիչների խոսքերով, աջակցել են Մ. Գորբաչովը, Ա. Կոզիրեւը, Գ. Պոպովը, Ա. Ռուցկոյը, Ա. Սոբչակը, Ա. Յակովլեւը, Ա. Վոլսկին, Ն. Պետրակովը եւ այլն: Համաժողովին կմասնակցեն մասավորականության, երիտասարդական, կուսակցական, քաղաքական կառուցվածքների, հոգեւորական եւ մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքագետներ, պատգամավորներ, գործարար մարդիկ, գիտնականներ: Նրանց համախմբում է մեկ ցանկություն՝ *«հիմքեր դնել 21-րդ դարում զարգացած եւ ժողովրդավարական աշխարհ ստեղծելու համար»:* ■

Լուրերի հոսք

Վրացիներն այլեւս պատանդ չեն

Կովկասի լեռնային ժողովուրդների համադաշնության խորհրդարանը չեղյալ է հայտարարել համադաշնության նախագահ Յուրի (Մուսա) Շանիբովի հրամանագիրը, որով հյուսիսկովկասյան հանրապետություններում բնակվող վրացիները պատանդ էին հայտարարվում: Համադաշնության խորհրդարանը Շանիբովին մեղադրել է նմանատիպ որոշումներ ընդունելու ծայրաստիճան անհանդուրժողականության եւ տարբերության համար: ■

Հրեաները հրեավարի

Վրաստանի հրեաների շրջանային միությունը հանդես է եկել Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման հիմնադրամ ստեղծելու նախաձեռնությամբ: Նրանք պատրաստակամություն են հայտնել անել առաջին ներդրումը 500 հազար ռուբլու չափով: ■

Խառնակիչների հետ գործ չունեմ

Ադրբեջանական խորհրդարանի նախկին խոսնակ Յաղուբ Մամեդովը «Խաբար սերվիս» գործակալությանը տված հարցազրույցում հերքեց «Մուսավաթ» թերթում տպագրված «Ադրբեջանի դեմ ուղղված դավադրություն» վերնագրով տեղեկությունը: Տեղեկության մեջ նշված էր, թե հուլիսի 30-ին եւ օգոստոսի 1-ին մոսկովյան «Ուկրաինա» հյուրանոցում Այազ Մութալիբովը Վեզիրովի, Նիզամի Սուլեյմանովի եւ Ադրբեջանի լեզգիական համայնքի ղեկավարների հետ անցկացրել է գաղտնի խորհրդակցություն, որին իբր թե մասնակցել է նաեւ Յաղուբ Մամեդովը: ■

Ստիպված դիմում են Ելցինին

Կրասնոսելսկի շրջանի ռուսական համայնքը կոչ է արել Ռուսաստանին պաշտպանել Հայաստանում ապրող ռուսների շահերը: Բորիս Ելցինին հղված դիմումում մասնավորապես ասված է, համայնքը հուսով է, որ Ռուսաստանը խաղաղարար միջոցներ ձեռք կառնի շրջանում արյունահեղության դադարեցման համար, որը Ադրբեջանի ագրեսիվ գործունեության հետեւանք է: ■

Թող ԵԱՀԽ-ն էլ գա

Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովը դիմել է Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆաելլիին հայ-ադրբեջանական առճակատման շրջան ԵԱՀԽ-ի դիտորդներ ուղարկելու խնդրանքով: Դիմումը հղված է Ալմա-Աթայում ստորագրված փաստաթղթերի ենթատեքստով: ■

Աբխազիայում առճակատումը չի ընդլայնվի

Սեպտեմբերի 1-ին Անդրկովկասյան զորքերի հրամանատարի տեղակալ գեներալ-լեյտենանտ Սուֆիան Բեղղաեւը հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ. *«Անձամբ ես համոզված եմ, որ Աբխազիայի առճակատման ծավալները չեն ընդլայնվի: Վրաստանը բավականաչափ զինուժ ունի, որպեսզի կարողանա վնասազերծել ահաբեկչական խմբերին, կարգ հաստատել իր տարածքում: Ինչ վերաբերում է մեր դիրքորոշմանը, ապա մենք պարտավոր ենք պահպանել լիակատար չեզոքություն եւ չխառնվել Վրաստանի ներքին գործերին»:*

Առանց վալյուտայի չի կարելի մուտք գործել Թուրքիա

Մոտ հազար մարդ Վրաստանի Սարփիի անցակետում չեն կարողանում անցնել Թուրքիայի տարածք այն պատճառով, որ թուրքական իշխանությունների որոշմամբ ոչոք անձնական վիզայով չի կարող մուտք գործել Թուրքիա, եթե չունի 500 դոլլար: Եթե այդ որոշումն չեղյալ չհայտարարվի, արտասահման մեկնող «գործարարների» մի մասը կզրկվի եկամուտից, եւ համապատասխանաբար Վրաստանի խանութների ցուցափեղկերից կդատարկեն թուրքական ապրանքները: ■

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

- Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:
- Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:
- Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:
- Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ արագացնել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տրվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:
- Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-70-38) Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի արագ եւ հանգիստ պայմաններում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կամ շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:
- Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

Լուրերը ինտերֆաքսի «Մոսկվի», «Նոյան տարեգրի» եւ մեր թղթակիցների

ԱԶԳ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

PUBLISET

Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրուած է տպագրութեան 2.09.1992

Դասիչ 69149
Պատուէր 1534

digitised by A.R.A.R.@